

Մամվել Ս. Ավետիսյան
Տար. գիր. դոկտոր

ՄԻՄՈՆ ԶԱՎԱՐՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին*

Մուտք

Հետաքրքիր զուգադիպությանը, երբ Հայաստանն աշխարհի գեղատեսիլ Լոռու Այգեհատ գյուղում 1865-ին ծնվեց ապագա քաղաքական գործիչ և գիտնական-գյուղատնտես Միմոն Զավարյանը, նույն տարվանից Մոսկվայի արվարձաններում սկսեց գործել նորաբաց Պետրոսյան (Պետրովսկո-Ռագումովսկի) գյուղատնտեսական ակադեմիան:



Մոսկվայի Պետրոսյան գյուղատնտեսական ակադեմիայի մասնաշենքը 19-րդ դարի վերջին

Դա Մոսկվայի ներկայիս Կ. Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիան է, որի պատերի ներսում ոչ միայն ուսանելու, այլև հեղափոխական մկրտություն էր ստանալու դեռևս պատանի Միմոն Զավարյանը:

Երիտասարդ տարիքում նա անդամագրվել է ռուս «Նարոդնովոլցիների» կազմակերպությանը և 1889 թվականին առաջին կարգի մրցանակով ավարտելով Ակադեմիան՝ իր կարճատև, բայց փառավոր կյանքն է ապրել կոչումով՝ Հ Յ Դաշնակցության հիմնադիր ու նվիրյալ, մասնագիտությամբ՝ տնտեսագետ-գյուղատնտես Միմոն Զավարյանը:

Ս. Զավարյանի գիտական ու քաղաքական գործունեությունը կարծես ի սկզբանե պայմանավորված էր Պետրոսյան գյուղատնտեսական ակադեմիայի առանձնահատկությամբ: Բավական է մի թռուցիկ հայացք նետել այս հաստատության պատմությանը, և կհամոզվենք, որ այն էական դերակատարություն է ունեցել թե՛ Ռուսաստանում գյուղատնտեսական կադրե-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 2.11.2013:

Ե (ՃԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013
ԿԸՄ համահայկական հանդես

րի պատրաստման և թե՛ հեղափոխական գաղափարների տարածման, հատկապես նարոդնիկական շարժման ծավալման գործում: **Նախ՝** 19-րդ դարի վերջին տասնամյակներին, Ռուսաստանի այլ բուհերի հետ համեմատած, այս ակադեմիայի կանոնադրությունը ամենաժողովրդավարականն էր, և ընդունվելու համար քննություններ կամ գիմնագիտ ավարտելու վկայական չէր պահանջվում: Ուստի գոյության առաջին յոթ տարիներին նրա ավելի քան հազար ունկնդիրներից միայն 139-ն է ունեցել ձևական կրթական շեմ: **Երկրորդ,** իր հիմնադրումից քիչ ժամանակ անց Պետրոլյան ակադեմիան սկսել է առանձնանալ ազատամիտ մթնոլորտով՝ դառնալով ուսանողության հեղափոխական խմորումների օջախը: Այստեղ 1869 թ. վերջին հայտնի Ս. Գ. Նեչանն իր ընկերների հետ միասին զուտ քաղաքական դրդապատճառներով սպանեց ակադեմիայի ունկնդիր Ի. Ի. Իվանովին: Այդ աղմկահարույց սպանությանը մասնակից էին նաև մի քանի ուսանողներ, որի պատճառով ակադեմիայի կանոնադրության մեջ որոշակի փոփոխություններ կատարվեցին: Այդուհանդերձ, Պետրոլյան ակադեմիայի ժողովրդավարական ոգին ճնշել չհաջողվեց, ուստի շրջանավարտների մեծ մասն այս կրթօջախից կյանք էր ստնում ոչ միայն մասնագիտական գիտելիքներով, այլև հեղափոխական գաղափարներով զինված¹:

Միմոն Զավարյանի մտերիմ ուսանողական ընկեր Մարտին Շաթիրյանը հետագայում գրում էր. «Միմոնը շատ ընդունակ ուսանող էր: Ճեմարանի կուրսը նա իւրացնում էր զարմանալի դիւրութեամբ և աւարտեց իբրև հմուտ մասնագէտներից մէկը, մանաւանդ քաղաքատնտեսութեան և վիճակագրութեան ճիւղերում, որ յետոյ երևաց իր մի շարք աշխատութեանց մէջ»²: Պետրոլյան ակադեմիայի ղեկավարությունը, «...հաշվի առնելով, Միմոն Զավարյանի փայլուն գիտելիքներով օժտված լինելը, մտավոր կարողությունները, տեսական ու գործնական պատրաստվածությունը, նրան առաջարկում է մնալ ձեմարանում դասախոսելու՝ հետագայում պրոֆեսորական ամբիոնի գործունեությունը տնօրինելու նպատակով: Սակայն նա հրաժարվում է և վերադառնում Կովկաս՝ բոլորովին այլ նպատակով ու մտադրությամբ»³:

Եթե Ս. Զավարյանի հեղափոխական գործունեությունը ուսումնասիրված է համեմատաբար մանրամասն կերպով, ապա որպես ագրարային տնտեսագետի՝ նրա գիտական և գործնական ծառայությունները մինչ օրս պատշաճ մակարդակով չեն գնահատվել: Ուստի ներկա ուսումնասիրության նպատակն է հնարավորինս ամբողջականորեն ներկայացնել Զավարյանի գիտական ժառանգությունը, գնահատել ավելի քան մեկ դար առաջ կատարված նրա ուսումնասիրությունների կարևորությունը և առանձին եզրահանգումների արդիականությունը:

1 Стів История Тимирязевского района (САО) – Электронная Москва. mosopen.ru/region/timiryazevskiy/history

2 Մ.Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմությունից, գրի առաւ՝ Ն. Հանգոյց, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1923, N 6, էջ 56:

3 Վ. Զավարյան, Միմոն Զավարյան, Եր., 2000, էջ 10.

1.Երևանի նահանգի և Կարսի մարզի հացաբեր շրջանների ուսումնասիրությունը

ԳԻՏՄԱԿԱՆՆԸ

Ե (ՃԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

Ս. Զավարյանի աշխատանքային գործունեության մասին մանրամասն տեղեկատվություն ենք ստանում 1902 թ. մարտի 17-ին Ռուսաստանի առևտրի և մանուֆակտուրայի գլխավոր տեսուչին հղված նրա «Գյուղատնտեսական հարցերը Կովկասի մեջ» հուշագրից, որը Ս. Վրացյանը թարգմանել է ռուսերեն բնագրից և հրատարակել «Հայրենիք» ամսագրի 1925 թվականի նոյեմբերյան համարում: Այս հուշագրով Ս. Զավարյանը նախ՝ ներկայանում էր որպես «Գյուղատնտեսության թեկնածու, Կոլլեժսկի սեկրետար Ս. Զավարով», այնուհետև ձևակերպում էր հետևյալ խնդրանքը. «Ունենալով բաականաչափ վարժություն Կովկասի տնտեսական կեանքին վերաբերող տեղեկություններ հաւաքելու և մշակելու, այլ և տեսնելով, թէ ինչքան արագ է զարգանում ազգաբնակչության տնտեսական կեանքի այս կամ այն ճիւղի իրական դրություն մասին ստոյգ տեղեկություններ ունենալու պահանջը, ես կը կամենայի ինձ ամբողջապէս նուիրել Կովկասի տնտեսական կեանքի ուսումնասիրութեան և հաւաքելու այն նիւթերի, որոնց բացակայութիւնը խոչընդոտ է հանդիսանում ուղիղ եւ արդար միջոցների կիրառման»⁴: Իրանից հետո Զավարյանը գրում էր. «1899 թուին Պետրովսկի ձեմարանի դասընթացքն աւարտելուց յետոյ, համարեա ամբողջ ժամանակ ես պաշտօնավարել եմ Կովկասում: Մի քանի տարի եղել եմ Կովկասեան Ֆիլոկսերային Կոմիտէի հետազօտիչ՝ ձամփորդելով երկրի համարեա բոլոր նահանգներում. մօտ 3 տարի եղել եմ գործավար Կովկասի ջրային հիմնարկութիւնների. մի քանի տարի՝ Թիֆլիսի քաղաքային անշարժ գոյքերի գնահատման գործի շրջանի կարգադրիչ. Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան յանձնարարութեամբ կես տարի զբաղուել եմ Երևանի նահանգի և Կարսի շրջանի հացաբեր վայրերի ուսումնասիրութեամբ և սակաւաբերութեան ու կարիքի դէմ պայքարելու միջոցների պարզաբանութեամբ. վերջապէս, վերջին չորս տարիները Կովկասեան Ֆիլոկսերայի Կոմիտէի գիւղատնտեսական հրահանգիչ եմ»⁵:

Այս հուշագրից նաև տեղեկանում ենք, որ Ս. Զավարյանը դեռևս Պետրովյան ակադեմիայում ուսումնառության վերջին շրջանում հետազոտել է Զուլթայիսի նահանգի գյուղատնտեսությունը, որն Ակադեմիայի կողմից



Ս. Զավարյանի «Երևանի նահանգի և Կարսի մարզի հացաբեր շրջանների ուսումնասիրության փորձ» գրքի տիտղոսաթերթը

4 «Միտոն Զուարեան», հատ. Գ., Անթիլիաս, 1997, էջ 439:
5 Նույն տեղում, էջ 439:

ընդունվել է որպես ավարտական թեզ՝ թեկնածուական աստիճանի շնորհման համար: Այսինքն՝ ավարտական աշխատանքի թեման և հետագա հետազոտությունները ցույց էին տալիս, որ նա առավելապես խորացել է ագրարային տնտեսագիտության ուղղությամբ:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո (1828 թ.), բացի Իվան Շոպենից⁶, ոչ ոք այնպիսի խորությամբ չէր ուսումնասիրել մեր երկրի տնտեսական ներուժը, մասնավորապես գյուղի և գյուղատնտեսության վիճակն ու հնարավորությունները, որքան Սիմոն Զավարյանը:

Զավարյանի առաջին ծանրակշիռ աշխատությունը «Փորձ Երևանի նահանգի և Կարսի մարզի հացաբեր շրջանների գյուղատնտեսության հետազոտության» մենագրությունն էր, որը Կովկասի կայսերական գյուղատնտեսական ընկերության (ԿԿԳԸ) խորհրդի որոշումով լույս տեսավ Թիֆլիսում՝ 1899 թվականին, ռուսերեն լեզվով: Աշխատության ներածականում Ս. Զավարյանը գրում էր. «1893–94 թվականների ձմռանը Կովկասի Կայսերական Գյուղատնտեսական Ընկերությունում կարդացվեց մի քանի զեկուցում, որոնցից երևում էր հացի պակասը Անդրկովկասի մի շարք շրջաններում: Արևելքի պատճառներն ուսումնասիրելու և դրա կործանարար հետևանքները կանխելու համար Ընկերությունը ընտրեց հատուկ հանձնաժողով⁷: Ահա այս հանձնաժողովը, շեշտելով հացամշակության կարևորությունը, միաժամանակ արձանագրում էր, որ ինչպես կառավարության, այնպես էլ տեղական մարմինների կողմից այդ ճյուղին պատշաճ ուշադրություն չի դարձվում: Եթե տնտեսության մնացած ճյուղերի համար պատասխանատու էր որևէ կոնկրետ անձ, անգամ ամբողջ հաստատություն, ապա հացամշակության հանդեպ ուշադրությունը խիստ անբավարար էր, և նրա արտադրական պայմանները գրեթե չէին ուսումնասիրված: Չկար որևէ մարմին, որ կպաշտպաներ այդ ամենակարևոր ճյուղի շահերը:

Ելնելով այս իրավիճակից՝ հատուկ հանձնաժողովն առաջարկում էր Ընկերությանը առավել լուրջ ուշադրություն դարձնել հացահատիկի արտադրության ոլորտին և, ի թիվս այլ միջոցառումների, տուժած շրջաններ գործուղել գիտակ մասնագետների, որոնց հետազոտությունները հիմք կհանդիսանան գյուղատնտեսության վարման առաջադիմական համակարգեր կիրառելու և բնակչությանը հացով ապահովելու միջոցառումներ մշակելու համար: Այսպես, 1894 թ. մայիսի վերջին Ս. Զավարյանը Ընկերության կողմից հանձնարարություն է ստանում 5 ամսվա ընթացքում կատարել Երևանի նահանգի և Կարսի մարզի հացաբեր շրջանների արտադրական պայմանների հետազոտությունը և առաջարկություններ ներկայացնել երկրագործության արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

Այդ կապակցությամբ Ս. Զավարյանը գրում էր. «1894 թ հունիս, հուլիս,

6 Стів Исторический памятник состояния Армянской области в эпоху ея присоединения к Россійской Имперіи. И. Шопен, Санкт Петербург, 1852.

7 Опыт изслѣдованія сельскаго хозяйства хтѣбороднаго района Эриванской губерніи и Карсской области., С. Заварова, Тифлисъ, 1899 г., с. VIII.

օգոստոս և սեպտեմբեր ամիսներն իմ կողմից ամբողջովին օգտագործվեց նախատեսված վայրերը այցելության, իսկ հետո հավաքված նյութերի մշակմանը ձեռնամուխ լինելու վրա»⁸: Հեղինակը նշում է, որ այդ աշխատանքն ուներ որոշակի դժվարություններ, առանձնացնելով հատկապես այն հանգամանքը, որ մինչ այդ տարածաշրջանում որևէ գիտական ուսումնասիրություն չէր կատարվել: «Ահա թե ինչու, երբ 1894 թ. աշնանը պարզ դարձավ, որ անբերրիությունն անցավ և կարծես կարիք չկա այլևս կառավարությանն արտակարգ առաջարկներ ներկայացնել, ինձ թվաց՝ ավելի օգտակար է 1892-94 թթ. անբերրիության մասին թռուցիկ կազմված հաշվետվության փոխարեն հետազոտությանը ավելի երկար ժամանակ հատկացնել և ընդհանրապես քննարկել դիտարկվող շրջաններում գյուղատնտեսության հարցը...»⁹: Իսկ դիտարկվող շրջանները բավականին ընդգրկուն էին: Հետազոտվել էր 76 բնակավայր, որից 34-ը՝ Նոր Բայազետի, 13-ը՝ Ալեքսանդրապոլի, 9-ը՝ Էջմիածնի, 7-ը՝ Երևանի գավառներում և 13-ը՝ Կարսի մարզում: Հետազոտվող բնակավայրերն այդ ժամանակ ունեին 8953 գյուղացիական ծուխ և 79043 շունչ, որը կազմում էր ամբողջ տարածքի համապատասխան ցուցանիշների 1/6 մասը:

Զավարյանը նշում էր, որ փորձել է ընտրել առավել տիպական բնակավայրերը, որոնց հիման վրա կատարված ուսումնասիրությունները կարող էին օգտագործվել ամբողջ շրջանի համար: Ընդհանրապես բավականին հետաքրքիր են հեղինակի կողմից կիրառված հետազոտական մեթոդները: Քանի որ առկա վիճակագրական տվյալները խիստ ընդհանրական և անբավարար են եղել, նա շրջել և հետազոտել է բոլոր շրջանները: Իհարկե, նախատեսված կարճ ժամանակահատվածում բոլոր գյուղերն առանձին-առանձին ուսումնասիրելն ուղղակի անհնար էր, ուստի առավելապես կատարվել են ընտրանքային հետազոտություններ և հաշվարկվել միջին վիճակագրական ցուցանիշները: Դրա հետ մեկտեղ՝ հարցազրույցների միջոցով ստացված տվյալները Զավարյանը ձգբոտել է խաչաձև հարցումներով, քանի որ, ինչպես նշում էր հեղինակը՝ «գյուղացիները աշխատում էին որքան հնարավոր է ավելի ծանր ներկայացնել իրենց դրությունը, և իրական վիճակը պարզելու համար ես ոչ միայն օգտվում էի խաչաձև հարցումներից ու սեփական տպավորություններից (յուրաքանչյուր գյուղի դաշտերը ուսումնասիրվել են մի քանի գյուղացիների ներկայությամբ), այլև այն ցուցումներից, որոնք կարելի էր ստանալ գյուղացիական շահերի հետ կապ չունեցող անձանցից, ինչպես նաև՝ դրանք ստուգելով գոյություն ունեցող շատ աղքատ գրականության տվյալներով»¹⁰: Ընդհանրապես Ս. Զավարյանը բավականին բժախնդիր մոտեցում է ցուցաբերել երկրագնդի տվյալների հավաքագրմանը: Նա մանրամասն ներկայացնում էր այն մեթոդաբանությունը, որի միջոցով հանգել է որակական ցուցանիշների հավաստի արժեքին: Օրինակ՝ գյուղատնտեսական մշակաբույսերի միջին բերքատվության հաշվարկման համար, բացի դաշտային ուսումնասիրություններից, նա հարցումներ է

8 Նույն տեղում, էջ VIII:

9 Նույն տեղում:

10 Նույն տեղում, էջ 10:

անցկացրել գյուղացիների, ոչ շահագրգիռ անձանց և անկախ դիտորդների շրջանում: Հարցումները կատարվել են ինչպես սովորական, այնպես էլ երաշտի տարիների համար: Այդուհանդերձ, միջին բերքատվության ցուցանիշի հաշվարկը դժվարանում էր այն պատճառով, որ յուրաքանչյուր ընտանիք շատ դեպքերում ուներ 5-10-20 տարածքներում գտնվող հողակտորներ, բացի այդ 1.5-2 անգամից 3 անգամ միայնացից տարբերվում էին ունևոր և աղքատ ընտանիքների ստացած բերքի ցուցանիշները¹¹: Այս առումով Զավարյանը վկայաբերում էր գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ցուցանիշների հաշվարկը Մեծ Ղարաքիլիսայի (ներկայիս Վանաձոր) և Ալեքսանդրապոլի շրջանի Քյավթառլու գյուղի (ներկայիս Շիրակի մարզի Փանիկ գյուղ)՝ ըստ շնչի և հավասարության սկզբունքով բաժանված հողերում: Ի դեպ, որպես որակական ցուցանիշ, նախ հաշվարկում էր ցանված սերմի և ստացված բերքի հարաբերակցությունը: Օրինակ՝ Քյավթառլու գյուղի ծխերը դասակարգելով 4 խմբի՝ Զավարյանը հաշվարկել է նշված հարաբերակցությունը, որը 1894 թ. համար միջինը կազմել է 5, իսկ խմբերի միջև տատանվել է 3,5-6-ի սահմաններում: Նույն հարաբերակցությունը 1893 թ. անբարենպաստ տարում կազմել է ընդամենը 1,82, իսկ խմբերի միջև տատանումը՝ 1,2-4: Նույն գյուղում տարբեր հողատերերի մոտ բերքի այսպիսի տարբերությունները Զավարյանը բացատրում էր մի քանի գործոնների ազդեցությամբ: Առաջին հերթին դա կախված էր ունևոր և աղքատ ընտանիքների հողամշակության տարբեր հնարավորություններից: Որպես կանոն՝ ունևոր ընտանիքներն ունեին ավելի մեծ հողաբաժին: Հեղինակը նշում էր, որ անգամ ըստ շնչի հողաբաժանման սկզբունքի կիրառման պայմաններում, խիստ առձակատուններից խուսափելու համար խոշոր հողատերերի հողերը միանգամից չեն վերաբաժանում, և նրանք բոլոր դեպքերում ունենում են առավելություն: Այսպիսի մոտեցումը բացատրվում էր նրանով, որ Կովկասում, ի տարբերություն Ռուսաստանի, հողերի արմատական վերաբաժանում չէր կատարվել: Դրա փոխարեն իրականացվել էր հողաբաժինների մասնակի հավասարեցում: Այսինքն՝ ավելացած հողակտորները ոչ թե բաշխվել էին վիճակահանության միջոցով, այլ ուղղակի դրանց ավել մասը առանձնացվել և հատկացվել էր պակաս հող ունեցողներին: Ավելին, շատ դեպքերում հողատերն ինքն էր որոշել, թե հողի որ մասը վերցնի. «Դրա արդյունքը լինում էր այն, որ հարուստ ընտանիքին միշտ մնում էր լավագույն հողակտորը, իսկ հողազուրկներն ստանում էին վատ, առանձին դեպքերում մշակության համար ոչ պիտանի հողակտորներ»¹²: Ահա թե ինչու միջին բերքատվությունը հաշվարկելիս անհրաժեշտ էր միավորել ունևոր և աղքատ ընտանիքների ստացած բերքի ցուցանիշները:

11 Տե՛ս նույն տեղում, էջ 215:

12 Նույն տեղում, էջ 218:

Ցորենի բերքատվությունը 1 դեյաատինից՝ ծովի մակարդակից տարբեր բարձրությունների պայմաններում¹³

ԳԻՏՆԱԿԱՆՆԸ

ԿԼԽ համահայկական հանդես Ե (ԺԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

| Գոտիները ըստ բարձրության, մ | Ցանվել է, փուլ | Հավաքվել է | | | |
|-----------------------------|----------------|---|----------------------|-----------------------|-----------|
| | | Ցանված սերմի և հավաքված բերքի հարաբերությունը | Հավաքված բերքը, փուլ | Միջին բերքատվությունը | |
| | | | | փուլ/դես | ցենտ./հա* |
| 1000-1200 | 13-12.5 | 6-5.5 | 78-68 | 73.5 | 11.0 |
| 1200-1400 | 12.5-12 | 5.5-5 | 68.7-60 | 64.4 | 9.6 |
| 1400-1600 | 12-11.5 | 5.4-5 | 60-51.7 | 56 | 8.4 |
| 1600-1800 | 11.5-11 | 4.5-4 | 51.7-44 | 48 | 7.2 |
| 1800-2000 | 11-10.5 | 4-3.5 | 44-37 | 40.5 | 6.1 |
| 2000-2200 | 10.5-10 | 3.5-3 | 37-30 | 33.5 | 5.0 |
| 1200-2200 | 11.5-11 | 4.5-4 | 52-44 | 48 | 7.2 |

Ի թիվս այլ գործոնների՝ Ջավարյանը հաշվի էր առել բերքատվության վրա տեղանքի՝ ծովի մակարդակից բարձրության ազդեցությունը: Հայաստանի ուղղաձիգ գոտիականության պայմաններում այս գործոնը էական ազդեցություն է ունեցել: Կարծում ենք՝ այսօր էլ հետաքրքիր են Ս. Ջավարյանի ներկայացրած հաշվարկները (Աղյուսակ 1):

«Փորձ Երևանի նահանգի և Կարսի մարզի հացաբեր շրջանների գյուղատնտեսության հետազոտության» մենագրության սկզբում Ս. Ջավարյանը նշում էր, որ 1898 թ. աշնանը, երբ գրքի ձեռագիրն ավարտին էր մոտենում, հողագիտական ուսումնասիրություններ կատարելու նպատակով Անդրկովկաս է եկել հայտնի հողագետ, պրոֆեսոր Վ.Դոկուչանը: Պետք է ենթադրել, որ Միսկվայի Պետրոլյան ակադեմիայի շրջանավարտ Ս. Ջավարյանը քաջածանոթ է եղել աշխարհահռչակ հողագետի հետազոտություններին, քանի որ առանձնակի պատկառանք էր տածում նրա անձի նկատմամբ: Վ. Դոկուչանը կովկասյան հետազոտությունների արդյունքում, ըստ ուղղաձիգ գոտիականության, երկրամասի հողերը դասակարգեց 5 խմբի և մանրամասն ներկայացրեց դրանց բնութագրերը: Այդ ուսումնասիրությունները սեղմ տարբերակով և մատչելի ձևով հրատարակվեցին «Կովկաս» թերթում: Միաժամանակ անվանի գիտնականը բազմաթիվ զեկուցումներ կարդաց Թիֆլիսում, որոնց, իր վկայությամբ, ներկա է եղել նաև Ջավարյանը: Շեշտադրելով պրոֆեսոր Դոկուչանի բարձր հեղինակությունը հողագիտության ոլորտում՝ Ջավարյանը խոստովանում էր, որ այլևս անհրաժեշտ չէ կատարել հողերի նոր քննություն, ուստիև ինքն օգտվել է անվանի հողագետի տվյալներից: Ինչպես տեսնում ենք որպես հետազոտող Ջավարյանը ցուցաբերում էր ծայրաստիճան շրջահայացություն և բարեխղճություն, որն իր դրսևորումն է ստացել քննարկվող աշխատության յուրաքանչյուր էջում:

Երևանի նահանգի և Կարսի մարզի հացաբեր շրջանների ուսումնասիրության արդյունքները Ջավարյանի կողմից ներկայացվել են որոշակի

13 Տես նույն տեղում, էջ 219:

* Վերահաշվարկը կատարել է հողվածի հեղինակը:

տրամաբանական հաջորդականությամբ: Նախ՝ նա ներկայացնում էր ուսումնասիրվող շրջանների բնական պայմանները՝ հողերի աշխարհագրությունը, կլիման, տնտեսությունների տիպերը և համակարգը, այնուհետև վերլուծում էր հիմնական ճյուղերի՝ անասնապահության, խաղողագործության, հացամշակության և կերարտադրության վիճակը: Առանձնահատուկ տեղ էր հատկացնում պարենային հարցին, որի շրջանակներում դիտարկում էր երկրագործության ներուժը, հացահատիկի ներմուծումը, գների հարաշարժը և տարածաշրջանին ցուցաբերվող օգնությունը:

Աշխատության «Անբերրիության հետևանքները և կարիքները» գլխում հեղինակը քննում էր սովի սպառնալիքի ներքո գյուղացիական ծխի ունեցվածքի հարկադրական վաճառքի երևույթը, որի հետևանքով կրճատվում էր անասնագլխաքանակը և ավելանում կենդանի քաշող ուժ չունեցող ընտանիքների թիվը: Անբերրիության հետևանքով ակտիվանում էին նաև հողերի վաճառքը, գրավադրումը և տրամադրումը վարձակալության: Արդյունքում՝ մնալով առանց հողի ու արտադրության գործիքների, ընտանիքի կերակրողը հեռանում էր գյուղից և աշխատանք փնտրում օտար ափերում: Հեղինակը հատուկ վերլուծում էր վարկավորման և բնակչության պարտքերի ավելացման երևույթները, բացահայտում գյուղական ծխի հիմնական կարիքները, որոնց հետևանքով սաստկանում են սովը, թերսնումը, հիվանդացությունն ու մահացությունը:

Աշխատությունն ավարտվում էր «Անբերրիության պատճառները և կարիքները, մի քանի միջոցառումներ» գլխով: Այստեղ, ի թիվս այլ գործոնների, որպես անբերրիության գլխավոր պատճառ հեղինակը նշում է երաշտը: Նա բազմամյա տվյալների համադրումով ցույց է տալիս երաշտի հաճախակիությունը: Մասնավորապես հիմք ընդունելով մարտից մինչև օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում տեղումների քանակը և վերջինս համեմատելով առանձին մշակաբույսերի ջրապահանջարկի հետ, ցույց է տալիս երաշտի ուժգնությունն ու ազդեցությունը բերքատվության վրա: Որպես այդ ռիսկի մեղմացման միջոց՝ Ջավարյանն առաջարկում էր մեծացնել գյուղացիական տնտեսությունների տեխնիկական հագեցվածությունը և գյուղատնտեսական գործիքների տեսականին: Նա նշում էր, որ գյուղացիական տնտեսությունը որքան հագեցված լինի տեխնիկայով, այնքան մեծանում է անբարենաստ պայմանների միակողմանի ազդեցությանը դիմակայելու հնարավորությունը:

Վերջապես, որպես անբարենաստ պայմանների ազդեցությունը մեղմացնող միջոց՝ Ջավարյանը կարևորում էր տնտեսությունների ձիշտ մասնագիտացումը և դիվերսիֆիկացումը (բազմազանեցումը): Այս առումով, այսօր էլ միանգամայն արդիական է առավել բարձրարժեք մշակաբույսերի շրջանացման հիմնախնդիրը: Այդ տեսանկյունից գյուղացիական տնտեսությունների անգործությունը շեշտադրելու համար Ջավարյանը նկատում էր, որ Ալեքսանդրապոլի բանջարաբույծները վերջին 10-15 տարիներին ընդամենը մի քանի գյուղում են շրջանացրել այնպիսի եկամտաբեր մշակաբույսեր, ինչպիսիք են գազարը և կաղամբը:

Ավելի քան հարյուրամյա հեռավորությունից ընթերցողին տարօրինակ կարող է թվալ, որ մեզ համար սովորական դարձած գազարի ու կաղամբի

շրջանացումն այդպես անհանգստացնում էր Զավարյանին: Մինչդեռ պատմությունը կրկնվում է, և այսօր ևս դժվարությամբ են ներդրվում այնպիսի բարձրարժեք մշակաբույսեր, ինչպիսիք են կոլտաբին, բրոկկոլին, պեկինյան, բրյուսեյան, կարմրագլուխ կաղամբները, ֆիզալիսը, պատիսոնը և այլ մշակաբույսեր: Զավարյանի կարծիքով՝ հիմնական պատճառներից մեկը գյուղացիներին պատշաճ խորհրդատվության մատուցման և ուսուցումների բացակայությունն է: Զարմանալիորեն արդիական են հեղինակի դիտարկումները: Անգամ այսօր՝ բարձր տեխնոլոգիաների ժամանակներում, ոչ միայն շատ գյուղացիներ, այլև բարձրաստիճան ղեկավարներ պատշաճ կարևորություն չեն տալիս գյուղատնտեսության գիտական և խորհրդատվական համակարգի զարգացմանը: Մինչդեռ Զավարյանը առաջարկում էր ստեղծել գյուղատնտեսական գիտելիքների տարածման և մասնագետների պատրաստման գործուն համակարգ, հիմնել գյուղատնտեսական ուսումնական հաստատություններ և փորձարարական կայաններ: Նա նշում էր, որ գյուղատնտեսական դպրոցները պետք է համապատասխանեն տվյալ շրջանի գյուղատնտեսության մասնագիտացմանը. «Կարսի և Ալեքսանդրապոլի շրջանների համար բազմաձյուղ երկրագործական դպրոց, իսկ Քանաքեռից մինչև Երևան և Արաքսի ափերը՝ այգեգործական... որպես կենտրոն կարելի է ընտրել Սարդարի այգիները: Ալեքսանդրապոլում հիմնել փորձարարական կայան և ֆերմա»¹⁴:

Իհարկե, Զավարյանին բախտ չվիճակվեց տեսնել իր գաղափարների իրականացումը, բայց արդեն 1920–1930–ական թվականներին Հայաստանում հիմնադրվեցին երկու բարձրագույն գյուղատնտեսական ուսումնական հաստատություններ, շուրջ մեկ տասնյակ գյուղատնտեսական տեխնիկումներ (ներկայումս դրանք վերակազմավորվել են քոլեջների), բազմաթիվ գիտահետազոտական ինստիտուտներ և փորձարարական կայաններ*:

Իհարձյալ այսօրվա դիտակետից միանգամայն արդիական է Զավարյանի այն մտահոգությունը, որ անհրաժեշտ է ոչ միայն կարևոր պարենամթերքի ներմուծումը փոխարինել տեղական արտադրությամբ, այլև գնահատել Հայաստանում աճեցվող խաղողի և մրգերի բացարձակ առավելությունը: Մանրամասն վերլուծելով Օդեսայի նավահանգստից մինչև Ալեքսանդրապոլ ծովով և ցամաքով ցորենի ներմուծման ծախսերը, համեմատություն կատարելով տեղում արտադրվող ցորենի ինքնարժեքի հետ, հեղինակը գտնում էր, որ Ռուսաստանը պետք է Երևանի նահանգի հարթավայրային գոտին օգտագործի խաղողի և մրգի մշակության համար, իջեցնի երկաթուղային տրանսպորտի տարիֆները և իրականացնի թարմ մրգի արտահանում: Նա կարևորում էր հատկապես խաղողի սեղանի սորտերի արտադրության ավելացումը: Այս առումով Զավարյանն անչափ կարևորում էր Հայաստանի տարածքում յուղատու մշակաբույսերի շրջա-

14 Опыт исследования сельского хозяйства хтѣбороднаго района Эриванской губернии и Карсской области., с. 309.

* Այս համատեքստում կարծում ենք՝ ժամանակն է վեր կանգնել քաղաքական բարդություններից, ըստ արժանվունյն գնահատել Զավարյան գիտնականի անուրանալի վաստակը և ՀՀ գյուղատնտեսական ուսումնական հաստատություններից մեկը անվանակոչել նրա անունով:

նացումը: Մասնավորապես նա նշում էր, որ մանանեխի և մանանեխի յուղի ամբողջ պահանջարկը կարելի է բավարարել սեփական արտադրության հաշվին, մինչդեռ այն ներուծվում է Սարատովից և Միջին Ռուսաստանի այլ շրջաններից:

Ըստ Ջավարյանի՝ Ռուսաստանի դեղատնային պահեստները լեցուն են Հայաստանի շրջաններից մթերված մի քանի դեղաբույսերով (պարսկական փոշի և այլն): Դրանց հավաքումն ու վերամշակումը արտահանման ուղղվածություն ունեցող բավականին շահեկան զբաղմունք է: Ուստի նա առաջարկում էր զարգացնել գործարարության այդ ոլորտը: Ջավարյանի համոզմամբ, շնորհիվ չոր կլիմայի և հրաբխային հողերի՝ Երևանի նահանգի բոլոր գյուղատնտեսական մթերքները բարձր որակի են և տարբերվում են հատուկ համային հատկանիշներով: Դրանից ելնելով՝ առաջարկում էր հատկապես տաք շրջաններում շրջանացնել գետնանուշը և զարգացնել չրերի արտադրությունը: Ջավարյանը հատուկ ուշադրություն էր հրավիրում գինեգործության զարգացմանը: Հեղինակը նշում էր, որ 10–20 տարի առաջ երևանյան գինիները դեռևս վատ վարկանիշ ունեին: Անգամ պնդում էին, որ գինու վատ որակը պայմանավորված է հողային պայմաններով, և որևէ բան փոխել անհնար է: Այդուհանդերձ, ընդամենը 2–3 գործարար մարդիկ, որոնք ունեին համապատասխան մասնագիտական փորձառություն և տեխնոլոգիայի իմացություն, ապացուցեցին, որ այդ կրծիքն անհիմն է. «Այսօր,– նշում էր Ջավարյանը,– երևանյան գինիները արտահանվում են Թիֆլիս և Ռուսաստան: Երևանյան կոնյակը համարվում է լավագույնը: Մեր գինիները համային հատկանիշներով գերազանցում են իմերեթական, Ելիզավետոպոլյան և կախեթյան գինիներին: Եթե գիտելիքների տարածման միջոցով պայքարենք մի շարք հիվանդությունների և վնասատուների դեմ, ապա բնակչությունը բավականին մեծ քանակությամբ լրացուցիչ արտադրանք կստանա»¹⁵:

Բացի կոնյակից ու գինիներից, Ջավարյանը կարևորում էր նաև թարմ մրգերի արտահանումը: Ի դեպ, նրա կարծիքով խաղողի թարմ օգտագործումն ավելի գերադասելի է, քան այդ արժեքավոր սննդամթերքը սպիրտի վերածելը. «Ամբողջ Կովկասում լավագույն սեղանի խաղողը, դեղձը, ծիրանը, դուտման (սեխի սորտ) ներկայումս անգամ Թիֆլիս չի հասնում: Փոխադրման մեծ ծախսերի և ճանապարհին այդ նուրբ մրգերի մեծ չափերով փչացման պատճառով Երևանում 1.5–2 կոպեկ գնի փոխարեն Թիֆլիսում վաճառվում է 8–10 կոպեկով, ուստի չի կարողանում մրցակցել Ելիզավետպոլի նահանգի, անգամ Անդրկասսայան երկրամասում արտադրվածի հետ»¹⁶: Ջավարյանը կոնկրետ հաշվարկների հիման վրա ցույց էր տալիս այն օգուտը, որ կստանան ինչպես արտադրողները, այնպես էլ սպառողները, եթե վերանայվեն երկաթուղային փոխադրումների տարիֆները:

Ընդհանրացնելով Երևանի նահանգի և Կարսի հացաբեր շրջանների ուսումնասիրությանը նվիրված իր աշխատության շրջանակներում ներ-

15 Опыт исследования сельского хозяйства хткбородного района Эриванской губернии и Карсской области, с. 307.


16 Նույն տեղում, էջ 402:

կայացված տեխնոլոգիական, տեխնիկական և կազմակերպատնտեսական միջոցառումները, Զավարյանը հանգում էր մի կարևոր հետևություն, որ այդ ամենը պետք է իրականացվի համալիր ձևով, քանի որ այլ կերպ արդյունավետությունը բարձր չի լինի:

2. Անդրկովկասի գյուղատնտեսությունը 19-րդ դարի վերջին և Ս. Զավարյանի տնտեսագիտական վերլուծությունները

Գիտահետազոտական գործունեության տեսանկյունից 19-րդ դարի վերջին տասնամյակը բավականին բեղմնավոր էր Զավարյանի համար: Ահավասիկ, 1900 թ. Կովկասի կայսերական գյուղատնտեսական ընկերության (ԿԿԳԸ) որոշումով Թիֆլիսում ռուսերեն լեզվով հրատարակվում է նրա հաջորդ՝ «Կովկասը գյուղատնտեսական առումով 1899 թվականին» գիրքը: Շուրջ 350 էջ կազմող այդ աշխատության մեջ մանրակրկիտ վերլուծության էին ենթարկվում Հարավային և Հյուսիսային Կովկասի բոլոր նահանգների գյուղատնտեսական արտադրության տարեկան արդյունքային ցուցանիշները և առաջադրվում էին գյուղացիության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման հրատապ խնդիրներ: Ինչպես տեղեկանում ենք գրքի ներածականից, 1900 թ. մարտ-ապրիլ ամիսներին այս աշխատության ձեռագիրը հատվածաբար զեկուցվել է Կովկասի կայսերական գյուղատնտեսական ընկերության (ԿԿԳԸ) ընդհանուր ժողովներում. «Վերջինս (ԿԿԳԸ-ն – Ս.Ա.) ցանկանալով մի կողմից՝ շահագրգիռ գերատեսչություններին ներկայացնել երկրամասի շատ շրջանների ծանր կացությունը, մյուս կողմից՝ ընդունելով, որ այս ուսումնասիրությունը ամբողջ տարվա առումով գյուղատնտեսական միավորումների խմբավորման և համակարգման առաջին և հաջողված փորձն է, որոշում է այն հրատարակել»¹⁷:

Զավարյանի «Կովկասը գյուղատնտեսական առումով 1899 թվականին» ուսումնասիրությունը նույնպես իրականացվել է որոշակի դժվարություններով: Խնդիրն այն է, որ մինչ այդ Կովկասում գյուղատնտեսության տվյալների հավաքագրման և վերլուծության միասնական համակարգ գոյություն չի ունեցել: Անգամ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների, բերքատվության և այլ վիճակագրական ցուցանիշների տեղեկատու չի հրապարակվել: Ուստի, ինչպես նշում էր հեղինակը, շատ դեպքերում, բացի տեղերում տվյալներ հավաքագրելուց, ինքնօգտվել է պարբերական մամուլի հրապարակումներից: Իհարկե, միշտ չէ,



Ս. Զավարյանի «Կովկասը գյուղատնտեսական առումով 1899 թ.» գրքի տիտղոսաթերթը

17 Кавказъ въ сельско-хозяйственномъ отношеніи въ 1899 году. – Состовитель С. Заваровъ., Тифлисъ, 1900, с. 1.

ԳԻՏՆԱԿԱՆԸ

Ե (ԺԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԵՄ համահայկական հանդես

որ այդ տվյալները բացարձակ հավաստի են եղել, սակայն հիմնականում ներկայացրել են գյուղերի իրական վիճակը: Ամփոփելով 1899 թ. գյուղատնտեսական տարվա վերլուծությունը, Ջավարյանը նշում էր, որ Հյուսիսային Կովկասի, Սևծովյան և Թիֆլիսյան նահանգների համար 1899 թվականը բարենպաստ էր, իսկ Քուբաիսի նահանգի արևելյան հատվածի, Դաղստանի մարզի մեծ մասի, Ելիզավետպոլի, Բաքվի, Երևանի նահանգների և Կարսի մարզի համար անբավարար, անգամ վատ տարի էր: Այսպիսի ընդհանրական գնահատականից հետո հեղինակը ուսումնասիրության բավականին հետաքրքիր եղանակ է ընտրում՝ սկզբում կատարելով գյուղատնտեսական հիմնական մթերքների գների և հացահատիկի բեռնավոխադրումների ծավալների համեմատական վերլուծություն: Այնուհետև անդրադառնում է այդ ցուցանիշների վրա ազդող գործոններին: Քանի որ գյուղատնտեսական մշակարույների ռոզգվոդ տարածքները խիստ սահմանափակ էին, որպես կարևոր գործոն Ջավարյանն ուսումնասիրում էր բերքատվության փոփոխության կախվածությունը մթնոլորտային տեղումներից: Ի դեպ, բնական երևույթների վերաբերյալ հեղինակի տեղեկատվությունը տարածաշրջանի, մասնավորապես Հայաստանի բնակլիմայական պայմանների վերլուծության համար մեր օրերում նույնպես գիտական հետաքրքրություն է ներկայացնում: Անդրկովկասի պայմաններում, բացի հաճախակի երաշտից, գյուղատնտեսության համար ուղղակի չարիք էր նաև կարկտահարությունը:

Հեղինակը նշում է, որ 1899 թ. գյուղատնտեսական տարին այդ տեսակետից բավականին անբարենպաստ էր: Կատարված հաշվարկները վկայում են, որ 1897-ին Հյուսիսային Կովկասում նկատվել է կարկտահարության 39 դեպք, իսկ 1899-ին՝ 50, մինչդեռ Անդրկովկասում նշված ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 223 և 239, իսկ ընդհանուր առմամբ կարկտահարության դեպքերը ավելացել են ավելի քան 10%-ով: Բավական է նշել, որ միայն Թիֆլիսի նահանգում 10325 դեպքատին տարածության վրա կարկտահարության վնասը կազմել է 812 հազ ռուբլի¹⁸:

Այնուհետև, ուսումնասիրվող տարածքների պարենային ապահովվածությունը բնութագրելու նպատակով 1885-1899 թթ. կտրվածքով վերլուծում է հացահատիկային բեռների շարժը Անդրկովկասյան երկաթուղով: Ըստ տարիների համադրելով հացահատիկային բեռների արտահանման, ներկրման, ներտնտեսային օգտագործման ցուցանիշները՝ Ջավարյանը բնութագրում է Անդրկովկասի նահանգների բնակչության՝ հացամթերքով ապահովվածությունը: Այդ շարժը նա ցույց է տալիս ոչ միայն ծավալային, այլև արժեքային ցուցանիշներով: Օրինակ՝ 1899-ին Թիֆլիսի նահանգի հացահատիկի արտահանման և ներմուծման բացասական սալդոն կազմել է 3090 հազ ռուբլի, իսկ 1892-1898 թթ. միջին տարեկանը՝ 1142 հազ ռուբլի: Համեմատաբար բարենպաստ ժամանակահատվածի՝ 1985-1891 թթ. համար սալդոն կազմել է 1155 հազ ռուբլի:

Բացի ընդհանրացված վերլուծությունից՝ Ջավարյանը կատարում էր նաև տարբեր նահանգների և շրջանների մանրակրկիտ հետազոտություն: Մեր օրերում թերևս հետաքրքրություն է ներկայացնում Թիֆլիսի նա-

18 Տե՛ս նույն տեղում, էջ 25:

հանգի Բորչալուի գավառի, Ելիզավետպոլի գավառի Ղարաբաղի և Զանգեզուրի շրջանների, ինչպես նաև Երևանի նահանգի գյուղատնտեսության գավարյանական վերլուծությունը: Հղում կատարելով «Մշակ» թերթի հունիսյան համարներին՝ հեղինակը նշում էր, որ Լոռու Սանահին, Հաղպատ, Մարց, Շահալի, Շամուտ, Աթան, Լորուտ, Իկահատ և հարևան մյուս գյուղերում սպասվում է հացի և խոտի լավ բերք, ենթադրվում էր, որ մեկ դեկտեմբերին կհավաքվի 60-100 փութ (9-16,4 գ/հա) ցորեն¹⁹: Շուրջվերում մրգի առատ բերք էր սպասվում: Սակայն տեղումների բացակայության պատճառով այս պատկերը կտրուկ փոխվում է: Օգոստոս ամսի դրությամբ տևական երաշտը սկսում է վնասել խոտհարքերը, ցանքատարածություններն ու պտղատու այգիները: «Մշակ»-ի Շուրջվերի թղթակիցը հայտնում էր. «Արևի տակ օդի ջերմաստիճանը հասնում է 40-45 աստիճանի, այգիները համարյա վառվել են, խոտ չկա»²⁰: Երաշտի պատճառով ծանր վիճակ է ստեղծվում ամբողջ Բորչալուի գավառում: Զալալօղլիից (ներկայումս՝ Ստեփանավան) օգոստոսի 8-ին ահագանգում էին, որ երկու և կես ամիս անձրև չի եկել, որի պատճառով նախորդ տարիների համեմատությամբ 3-4 անգամ պակաս խոտ է կուտակվել, և անասնակերի գինը բարձրացել է աննախադեպ չափերով:

Զավարյանը հետևողականորեն ուսումնասիրում էր գավառներից եկող տեղեկատվությունը, վերլուծում վիճակագրական տվյալները և բնութագրում գյուղի ու գյուղատնտեսության սոցիալ-տնտեսական վիճակը: Դեռևս 1898 թ. աշնանից սկսված երաշտը հաջորդ տարի ծանր հարված է հասցնում հատկապես Երևանի նահանգի գյուղատնտեսությանը: Էջմիածնի գավառում, ոռոգման հնարավորություններով պայմանավորված, հարթավայրի գյուղերի ցորենի, գարու և խաղողի բերքատվությունը որոշ չափով ավելին էր բազմամյա տարիների միջինից, խոտի և բամբակենու բերքատվությունը՝ ցածր: Նախալեռնային և լեռնային գոտում գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը պակասել էր ավելի քան երկու անգամ: Երաշտը վնասում էր անգամ բարձր լեռնային արոտները: Հեղինակը վկայակոչում էր «Մշակի» թղթակցի հուլիսի 15-ի հաղորդումը. «... քոչվոր քրդերը սարից իջել են և վաճառում են հոտը: Դրությունը օրհասական է»²¹:

Մանրամասն կերպով արձանագրելով Հարավային Կովկասի նահանգներին պատուհասած բնական աղետի կործանարար հետևանքները, Զավարյանը գրում էր. «Ուսումնասիրելով հացահատիկի և հողի մյուս արտադրանքների բերքի ամփոփ տվյալները, ակամայից հարց է առաջանում. որտեղից և ինչ ճանապարհով վնասված տարածքների բնակչությունը պետք է լրացնի կորուստը... Ցավոք սրտի, ավելի հեշտ է այսպիսի հարցադրում անել, քան պատասխանել դրան: Բոլոր նման իրավիճակներում այդ ծանր դրությունից դուրս գալու ելքերից մեկը, պետք է խստովանել, կողմնակի վաստակի և արտագնա զբաղմունքի ակտիվացումն

19 Տե՛ս նույն տեղում, էջ 72:

20 Նույն տեղում, էջ 73:

21 Նույն տեղում, էջ 240:

է, որին դիմում են տուժած տարածքների բնակիչները»²²: Այսինքն՝ գյուղացին իր ծայրահեղ աղքատությունը մասամբ հաղթահարելու, ընտանիքը սովի ճիրաններից փրկելու համար պետք է գնար պանդխտության:

Ներկայումս, անդրադառնալով մեծ չափերի հասած արտագաղթին, որոշ վերլուծաբաններ վկայակոչում են պատմական փաստերը և հատկապես շեշտադրելով հայերի զանգվածաբար պանդխտության մեկնելու երևույթը, փորձում են դա վերագրել մեր ազգային առանձնահատկություններին: **Մինչդեռ յուրաքանչյուր կոնկրետ դարաշրջանում և կոնկրետ պայմաններում արտագաղթի պատճառահետևանքային կապերի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս երևույթը պայմանավորված էր ոչ միայն անվտանգության նկատառումներով, այլև անհատի լիարժեք ինքնադրսևորման հնարավորությունների սահմանափակությամբ և ընտանիքի հացի խնդիրը լուծելու անհրաժեշտությամբ:**

Դիցուք՝ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին տասնամյակում հայ գյուղացուն պանդխտության էր մղում տնտեսական ծանր վիճակը: Ի դեպ, ինչպես նկատում էր Ջավարյանը, արտագնա աշխատանքն էլ կապված էր լուրջ դժվարությունների հետ և ընտանիքի գոյությունը պահպանելու խնդրի ամբողջական լուծում չէր տալիս: Այս եզրահանգումը հիմնավորելու համար հեղինակը հաշվարկում է Կովկասի արդյունաբերական ձեռնարկությունների նոր աշխատատեղերի հնարավորությունները և գտնում, որ 1899 թ. այն չի գերազանցի 4000-ից: Մա այն դեպքում, եթե աշխատողները վճարվեն տարեկան 180 ռուբլի կամ ամսական 15 ռուբլի: Բայց գավառներից գալիս են տասնյակ հազարավոր աղքատացած գյուղացիներ, և աշխատուժի մեծ ավելցուկի հետևանքով գործատուն վճարում է ավելի ցածր աշխատավարձ: Մա էլ լավագույն դեպքում, քանի որ, ինչպես նշում էր Ջավարյանը. «... չպետք է մոռանալ, որ Կովկասի ֆաբրիկաների աշխատողների հիմնական կոնտինգենտը պարսիկներն են: Իրենց աննշան, համարյա չինական պահանջմունքներով, վերջիններս չեն վախենում ոչ մի մրցակցությունից, անգամ սոված գյուղացիների մրցակցությունից»²³: Այստեղից հետևություն, որ արդյունաբերությունը անկարող է լուծել բոլոր տուժած գյուղացիների ժամանակավոր զբաղվածության ու վաստակի հարցը:

Հաջորդ ուղին, որին դիմում էին գյուղացիները նման իրավիճակում, բարձր տոկոսով վարկ վերցնելն էր: Տարեային աղետից տուժած գյուղացիները, հայտնվելով անելանելի վիճակում, հարկադրված էին ավելացնելու իրենց պարտքերը, գրավադրելու արժեքավոր հողերը, գույքը, ապագա բերքն ու իրենց աշխատուժը. «Փոխատվական կապիտալի տոկոսների ուժեղ բարձրացման, ունևորների կողմից՝ տնանկների, հարուստների կողմից՝ աղքատների, քաղաքացիների կողմից՝ գյուղացիների նկատմամբ անխիղճ վերաբերմունքի մասին են գրում ինչպես Քութայիսից, այնպես էլ Երևանի նահանգից, Ղազախից ու Դաղստանից: Ամբողջական պատկերացում կազմելու համար ավելացնենք, որ հաշվետու տարում շահույթ ստացած տարածքների բնակիչները, օգտվելով տուժած տարածքների բնակ-

22 Նույն տեղում, էջ 337:

23 Նույն տեղում, էջ 339:

չութեան դժբախտությունից, ուղղակի կամ անուղղակի, նկատելի կամ աննկատ ճնշում էին ներյալներին, հացը վաճառում և դրա դիմաց ստանում էին անասուն, աշխատութ...»²⁴:

Զավարյանը նշում էր, որ նման պայմաններում խիստ ակտիվանում են վաշխառուները և ուղղակի կեղեքում ծանր վիճակում հայտնված գյուղացիներին: Ակամայից վերհիշում ենք Հովհաննես Թումանյանի «Բորչավում» հրապարակախոսական հոդվածը. «Մովը վաշխառու հարուստի ընկերն է: Մովն աղքատ գյուղացուն տանում է վաշխառու եղբոր դուռը, և այս բավական է...Թեկուզ մի մանեթ առնի գյուղացին – էլ չի պրծնելու յուր պարտքի տակից: Զարմանալի խորամանկ են այդ վաշխառու հրեշները: Մի օր յուր ժամանակին գյուղացին տանում է յուր պարտքը ետ տալու. «Տո ի՞նչ քեզանից փող ուզում, տար բանացրու, մի ուրիշ ժամանակ կունենաս կտաս, հիմի էս սահաթին ինչ ես վազում, ուրիշ պակասություն կունենաս, տար քու պակասությունն արա...»: այսպիսի սրտացավ բարեկամի նման վաշխառուն ետ է տալիս փողը գյուղացուն և անխիղճ տոկոսով, տոկոս տոկոսին բարդում, մի քանի ամսում աննկատելի կերպով մեկ էլ տեսնում ես բանն այնտեղ է հասել, որ գյուղացու ունեցած-չունեցածը վեր է գրում պարտքատերը»²⁵:

«Կովկասը գյուղատնտեսական առումով 1899 թվականին» աշխատության վերջում Զավարյանը կատարում էր գյուղացիական տնտեսությունների ընտանեկան բյուջեի վերլուծություն և համեմատություն անցկացնելով Եվրոպայի և Ռուսաստանի համապատասխան ցուցանիշների հետ՝ հատկապես արձանագրում էր ծայրամասային նահանգների գյուղացիների ծանր կացությունը, որն ավելի օրհասական էր դառնում տարերային աղետների պատճառած վնասների հետևանքով:

3. Հարկերը Անդրկովկասում և գյուղացիների վիճակը

Զավարյանը մշտապես հետևել է Ռուսական կայսրության կողմից Անդրկովկասում իրականացվող ագրարային քաղաքականությանը: Միաժամանակ, քաջածանոթ լինելով այլ երկրների փորձին՝ գիտական բարեխղճությամբ կատարել է համեմատական վերլուծություններ, բացահայտել ագրարային քաղաքականության թույլ կողմերը և առաջարկել դրանց հաղթահարման հիմնավոր ուղիներ: Ահավասիկ, 1901-1902 թթ. «Մուրձ» պարբերականում «Տնտեսական հարցեր» խորագրով տպագրվում է Զավարյանի գիտահանրամատչելի բնույթի հոդվածաշարը: Հրապարակումներից ութը կրում է «Հողային տուրքը» և հարկերը Կովկասում», երեքը՝ «Անասնապահությունը և կաթնատնտեսությունը մեր և ուրիշ երկրներում» և մեկական՝ «Կովկասյան գյուղատնտեսական և արդյունաբերական ցուցահանդեսը» և «Վաշխառությունը Երևանյան նահանգում և Կարսի շրջանում» վերնագրերը:

Հարկային համակարգի հիմնավոր վերլուծության համար առիթ էին տվել 1901 թ. հունվարի 1-ից Կովկասի հարկային համակարգում իրակա-

24 Նույն տեղում, էջ 339:

25 Հովհաննես Թումանյան, Ընտրանի, Եր., «Հայագիտակ», 2001, էջ 439:

նացված լուրջ փոփոխությունները: Դրանց էությունն այն էր, որ Կովկասում վերացվում էին մինչ այդ գործող ծխային և այլ հողային հարկերը, որոնց փոխարեն սահմանվում էր. «ա) «Պետական հողավարձ» կամ աւելի կարճ ասած՝ «պետական տուրք» (**գոսուտարսավեննայա օբրոչնայա պոդատ**) բոլոր գիւղացիների (բացի կոզակների) ձեռքին մշտապէս գտնուած արքունական հողերից և բ) Պետական հողային տուրք (**գոսուտ. պոզենելնի նալոզ**) բոլոր մնացած հողերից (ի բաց առեալ տէրութեան անմիջական տրամադրութեան տակ գտնուած հողերը)»²⁶:

Բացի այդ, տեղական կարիքների բավարարման և պետական ծառայությունների մատուցման համար «... գիւղական հասարակութիւնների հողերի հետ հաւասար հարկի են ենթարկուում և մասնաւոր անձնաւորութիւնների ու արտօնեալ (ազնուական և այլն) դասակարգերի հողերը»²⁷: Այս հարկատեսակն ընդունված էր անվանել զենակիյ, որի միջոցները ուղղորդվում էին տեղական ոստիկանության, ճանապարհների, բժշկական, ժողովրդական կրթության, տեղական բանտերի ու բարեգործական հիմնարկությունների ծախսերին:

Զավարյանը նախ ներկայացնում է վերոհիշյալ հարկերի գանձման մեթոդաբանությունը, որից հետո համեմատական վերլուծության միջոցով անդրադառնում հարկային համակարգի թերություններին: Մասնավորապէս նա գրում է. «... հողային տուրքի ամենախոշոր թերութիւնը կայանում է անհավասարութեան մէջ, որով գիւղացի աշխատող աղքատ դասակարգը վճարելու է հողի տուած զուտ արդիւնքի 18,8%-ը, իսկ միւս հողատէրերը – միմիայն 11%: Շնորհիւ տուրքի անհաւասարութեան, միւնոյն տեղում գտնուած երկու միատեսակ կալուածներ, որոնք օրինակի համար, բերում են 100-ական ռուբլի զուտ արդիւնք, կը վճարեն 18,8 կամ 11 ռուբլի, նայած թէ ում սեփականութիւն են կազմում՝ արքունական հողի վրայ ապրող գիւղացու, թէ ազնուականի, կամ այլ սեփականատիրոջ: Մա մի այնպիսի պայման է, որի հետևանքը տնտեսական մրցման մէջ կարող է լինել միմիայն արքունական գիւղացու ընկճումն ու խոնարհուելը ազնուականի ու սեփականատիրոջ առաջ»²⁸:

Զավարյանի դիտարկումով՝ խոշոր սխալներ կան նաև տարբեր տարածքների հողերից ստացվող զուտ եկամտի հաշվարկման մեթոդաբանության մէջ: Հեղինակը գրում է. «Տնտեսական գիտութեան մէջ զուտ եկամուտը համարվում է այն եկամուտը, որ մնում է, եթէ ընդհանուր մուտքից դուրս գան բոլոր արուած ծախքերը»²⁹: Այնուհետև՝ Շիրակի դաշտի օրինակով նա հաշվարկում էր մեկ դեսյատին մշակվող վարելահողի տարվա եկամուտը (43 ռուբ. մուտք – 32 ռուբ. ծախքեր=11 ռուբ) և միաժամանակ նշում, որ դա «... միջակ տարուայ զուտ եկամուտը չէ: Շիրակում հողը երկու տարի մշակուելուց յետ մեկ տարի հանգստանում է, և այդ հանգստացող հողը (խոզանը) տալիս է մոտ 5 ռուբլու խոտ,- ուստի այդ շրջանի վարելահողերի միջակ տարուայ զուտ արդիւնքը կը լինի

26 «Միւնոն Զաւարեան», հատ. Գ., Անթիլիաս, 1997, էջ 170:

27 Նույն տեղում էջ 170:

28 Նույն տեղում, էջ 173:

29 Նույն տեղում, էջ 173:

(11*2+5)/3=9 ռուրլի»³⁰:

Հրաշալի տիրապետելով Անդրկովկասի հողային ռեսուրսներին և գյուղատնտեսական ներուժին՝ Ջավարյանը բազմաթիվ այլ սխալներ էր մատնանշում իրենց առանձնասենյակների պատերի ներսում օրենքներ ու հրահանգներ գրող պաշտոնյաների հրապարակած հարկային իրավական ակտերում: Անդրադառնալով «Կովկասի հողերի քանակության և եկամուտի ցուցակին», որի հիման վրա որոշվում էին տարբեր նահանգներից վճարելիք տուրքերը, նա բազմաթիվ սխալներ էր մատնանշում և դրանք ընդհանրացնելով՝ գրում էր. «Ցուցակից երևում է, որ մշտադալար Քութայիսի նահանգի հողերը այն եկամուտն են բերում, ինչ որ Թիֆլիսի ու Գանձակի նահանգի հողերը. որ ցրտով պատած Կարսի բարձրավանդակը նոյն արժեքն ունին, ինչ որ Երևանի դաշտը իր հարավի բերքերով... Այդ թուերի սխալ լինելը պարզ է, կարծես, նաև առանց մանրամասն բացատրությունների»³¹:

Ինչպես նշել ենք, Ջավարյանը առանձնահատուկ տեղ էր հատկացնում գյուղատնտեսության մասնագետների պատրաստմանը և գյուղացիների ուսուցմանը, մասնագիտական խորհրդատվությանն ու արտասահմանյան առաջավոր փորձի տեղայնացմանը: Այս նպատակին էր ծառայում «Մուրձի» երեք համարներում տպագրված «Անասնապահությունը և կաթնատնտեսությունը մեր և ուրիշ երկրներում» հոդվածաշարը: Ցավով պետք է նշել, որ այս շարքում բարձրացված բազմաթիվ հիմնահարցեր ցայսօր ամբողջական լուծում չեն ստացել, և Ջավարյանի դիտարկումները դեռևս օրախնդիր են: Այս տեսանկյունից բավականին հետաքրքիր է անասնապահության զարգացման ամենակարևոր գործոնի՝ կերարտադրության վիճակի վերլուծությունը: Համեմատելով Անդրկովկասի ցուցանիշները Ռուսաստանի, եվրոպական երկրների և ԱՄՆ-ի հետ՝ հեղինակը գրում էր. «Անդրկովկասի և եվրոպական Ռուսաստանի անասունների քչութեան գլխավոր պատճառներից մեկը այն է անկասկած, որ մեր երկրում շատ քիչ դեր է խաղում խոտի արհեստական ցանքսը: Այն ժամանակ, երբ Եվրոպայում, - մանաւանդ նրա հիւսիսային աւելի ցուրտ և խոնավ մասերում, - ցանովի մարգագետինները բռնում են ահագին, տարեց տարի աւելանող տարածություն, մեզ մոտ դրա մասին շատ տեղեր գաղափար անգամ չունեն»³²:

Հաջորդ կարևոր խնդիրը, որին անդրադառնում էր Ջավարյանը, գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների բարելավումն ու նոր ցեղերի բուծումն էր. «Այն ժամանակ, երբ Անդրկովկասը վերջին տասնեակ տարիների ընթացքում կրած է բաւականին մեծ փոփոխություններ և ընդհանուր կուլտուրական, և արդիւնաբերական ու գիւղատնտեսական միւս ճիւղերի մէջ - անասնապահութեան վերաբերմամբ նա շարունակում է մնալ համարեայ նոյն նահապետական դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ էր 100 տարի առաջ: Անցեալ դարում էլ մենք ունէինք Ղարաբաղի նոյն գեղեցիկ նժոյգները, նոյն դիմացկուն, չարքաշ պայմաններին

30 Նույն տեղում, էջ 174:

31 Նույն տեղում, 176:

32 Նույն տեղում, 179:

սովոր տեղական ձիերը, որոնք հիմա էլ գնահատում և ձիարշաններում մրցանակներ են ստանում: ... Այն ոչխարը, որ պահում է այսօր Կովկասում մսի, բրդի, կաթի համար – պահում էր և 100 և 1000 տարի առաջ: Նոյն անշարժության մէջ են և մեր մեծատաւարի ցեղերը»³³:

Անդրադառնալով կաթի վերամշակման խնդիրներին՝ Զավարյանը նշում էր, որ կաթնամթերքի բազմազանությանը Կովկասը բռնում է բացառիկ դիրք. «Մածունը, կեֆիրը և որոշ չափով կումիսը տարածուած են Եւրոպայում ու Ամերիկայում Կովկասից: Առողջապահական, սննդի, համեղութեան կողմից այս կաթնէղենների դերը ընդունում է շատ և շատերի կողմից: Դրանց գործածութիւնը տարեց տարի ստանում է ավելի և ավելի լայն ծաւալ»³⁴: Այդուհանդերձ, Զավարյանը քննադատաբար էր վերաբերվում կաթի վերամշակման տեխնոլոգիայի հետամնացությանը, որի պատճառով կաթնամթերքի մաքրությունը բարձր չէր: Մասնավորապէս պատենական մեթոդներով էր յուղն առանձնացվում կաթից, պանրի մակարդը պատրաստվում և այլն, ինչն ազդում էր պանրի մաքրության և գնի վրա: Նա առաջարկում էր սերը կաթից բաժանելու համար օգտագործել գոիչ մեքենաներ (սեպարատորներ): Կոնկրետ հաշվարկների միջոցով ցույց էր տալիս անասնապահության ցածր եկամտաբերությունը և դրա հիմնական պատճառները: Միթե այսօր էլ արդիական չէ Զավարյանի այն մտահոգությունը, որ մինչև իրացումը կաթի սառեցման և փոխադրման հատուկ հարմարությունների բացակայությունը մեծացնում է կորուստները, ազդում արտադրանքի որակի ու գնի վրա: Ներկայումս Հայաստանի այն համայնքներում, որտեղ կազմակերպված չեն կաթ իրացնողների կոոպերատիվներ և տեղադրված չեն կաթի սառեցման ագրեգատներ, մթերող կազմակերպությունների կողմից արտադրողներին վճարվում է սովորականից 20–25 տոկոսով ցածր գին, իսկ կորուստները բավականին մեծ են:

Հաջորդ արդիական հարցը, որ քննարկում էր Զավարյանը, շվեյցարական և եվրոպական պանիրների արտադրության հիմնախնդիրն էր: Նշելով կովկասյան կովերի կաթի բարձր յուղայնությունը՝ հեղինակը միաժամանակ նկատում էր. «Բացի այդ, շնորհիւ երևի լեռնային ընտիր արօտների, մեր Կովկասից ստացում է այն տեսակ ընտիր պանիր, որ անկարելի է լինում ստանալ Եւրոպական Ռուսաստանում: Թե ինչքան շահաւէտ է պանրագործութիւնը եւրոպական ձևով, կարելի է եզրակացնել նրանից, որ կովի անքաշ, քաշուած և ոչխարի անքաշ պանիրները տեղական ձևով պատրաստուած ժամանակ ծախուում են պուղը 3–4, 1,5–3 և 4–5 ռուբլով, այն ինչ՝ նոյն քանակութեամբ կովից, նոյն քանակութեամբ ստացուած միայն եւրոպական ձևով պատրաստուած պանիրները (շվեյցարական, հոլլանդական, ռոկֆոր) արժեն 2–12, 6–8, 15–20 ռուբլի. այսինքն, եւրոպական ձևով պատրաստուած մթերքները երեք անգամ աւելի են գնահատուում, քան տեղական ձևով պատրաստուածները: Դա էր պատճառը, որ գիւղատնտեսական ճիւղերից և ոչ մէկը չի կրել Կովկասում (թէև շատ նեղ շրջանում) այն փոփոխութիւնը, որ կրել է պանրագործու-

33 Նույն տեղում, էջ 285–286:

34 Նույն տեղում, էջ 288:

թիւնը և իւր պատրաստելը եւրոպական ձևով»³⁵:

Այո, դեռևս 19-րդ դարի 60-ական թվականներին բարոն Ալ. Ֆ. Կուչեն-բախը Կովկասում հիմնեց եվրոպական պանրի առաջին գործարանը: Հետագայում դրանց թիվն ավելացավ և 1901 թ. հասել էր 23-ի, որոնք տարեկան արտադրում էին 18000 փութ շվեյցարական պանիր: Պատահական չէ, որ խորհրդային տարիներին Հայաստանը դարձել էր ԽՍՀՄ-ում շվեյցարական պանիրների հիմնական մատակարարը, և դրա արտադրությունը հիմնականում կենտրոնացած էր Լոռու (Ստեփանավան, Տաշիր) և Սյունիքի (Միսիան) մարզերում, որտեղ առկա են հարուստ բուսականություն ունեցող ալպյան արոտավայրեր: Այսօր էլ Լոռու մարզի Քարախաչ ՄՊԸ-ի կաթի վերամշակումը կատարվում է 19-րդ դարի 80-ական թվականներին գերմանացի մասնագետների ներդրած տեխնոլոգիայով և ժամանակին նրանց կառուցած բեռոնե ավազաններում: Ինձ հիացմունք է պատճառել պահեստում ցածր ջերմաստիճանի ապահովման առանձնահատուկ տեխնոլոգիան: Բացի այն, որ ձմռանը պատրաստված սառցե խորանարդիկները, աստիճանաբար հալվելով, օդի ջերմաստիճանը իջեցնում են, դրան նպաստում է նաև սարի տակից բխող սառնորակ ջուրը, որը մշտապես հոսելով պահեստի միջով՝ օդի հարաբերական խոնավությունն ու ջերմաստիճանն է կարգավորում: Իհարկե, ներկայումս այս պարամետրերի կարգաբերման տեխնիկական հնարավորությունները ավելի կատարյալ են, բայց ընդհանուր առմամբ պահպանվում է եվրոպական պանիրների պատրաստման ավանդական տեխնոլոգիան:

Զավարյանը առանձնահատուկ տեղ էր հատկացնում անասնապահության ճյուղի արդյունավետության վերլուծությանը, բացահայտում էր անասունների մթերատվության, արտադրանքի որակի ու գնի, պանիրների և յուղի տեսականու ազդեցությունը եկամտաբերության մակարդակի վրա: Նա, կարևորելով մասնագիտացման, աշխատանքի բաժանման ու տնտեսությունների խոշորացման հարցերը, գրում էր. «Աշխատանքի բաժանումը առաջ է գնում այնպիսի արագ քայլերով, որ հեռու չէ այն ժամանակը, երբ ամէն աշխատող կը զբաղուի միայն մի նեղ ճիւղով, ծախսելով իր արտադրած մթերքների 50, 80, 90%-ը»³⁶: Այնուհետև, անդրադառնալով տնտեսությունների խոշորացմանը, Զավարյանն ավելացնում էր. «Քանի խոշոր է ձեռնարկութիւնը, այնքան նա աւելի է տանում կատարելագործութիւնների համար անհրաժեշտ ծախսեր, նոյնքան պակաս է լինում ընդհանուր ծախսերը, այնքան ավելի հեշտ և ձեռնատու է այդ ձեռնարկութեան առևտուրը դնել շահաւէտ հողի վրայ: Այդպէս է միջազգային շուկայի և ներկայ տնտեսական պայմանների պահանջը»³⁷:


Երիցս ճշմարիտ է այս տողերի հեղինակը, քանզի այդպիսին է նաև այսօրվա և վաղվա պահանջը:

35 Նույն տեղում, էջ 297-298:

36 Նույն տեղում, էջ 306:

37 «Միմոն Զաւարեան», Գ. հատ., Անթիլիաս, 1997, էջ 308:

4. Ղարաբաղի տնտեսական պայմանների հետազոտությունը



Ս. Զավարյանի «Ղարաբաղի տնտեսական պայմանները և 1906-1907 թ. ՍՈՎԸ» գրքի ռուսերեն հրատարակության տիտղոսաթերթը

Բաքվում գործող Հայկական կուլտուրական միության ագրարային մասնաձյուղը 1906 թ. նոյեմբերին Միտն Զավարյանին առաջարկում է այցելել Ելիզավետպոլի նահանգի սովից առավել տուժած շրջաններ և պարզել, թե օգնության ինչպիսի ձևեր կարելի է ընտրել, ինչպես նաև տեղերում կազմակերպել խմբեր՝ արտաքին օգնությունը աղետյալներին հասցնելուն աջակցելու համար: Այս առաքելության մասնակիցները մի փոքր խումբ են եղել և արդեն 1906 թ. նոյեմբերի 17-ին ուղևորվել են Ելիզավետպոլ, իսկ չորս օր անց հասել Շուշի: Տեղեկատվություն հավաքելու և իրավիճակին ծանոթանալու նպատակով խումբը այցելում է Խաչենի և Վարանդայի գյուղերը, որից հետո՝ Միսիան, Կապան, Գորիս: Այստեղից անցնում են Շուշի և Աղդամի ու Եվլախի վրայով վերադառնում Թիֆլիս: Ըստ էության խմբի ճանապարհորդությունը տևում

է մոտ երկու ամիս և Զավարյանի կարծիքով. «Չնայած ձիով ճանապարհորդելը, հատկապես ձմեռ ժամանակ կապված է բազում դժվարությունների հետ, բայց մենք չենք կարող առանձնակի հաճույքվ չհիշել այդ երկու ամիսները»³⁸:

Այս անջնջելի տպավորությունները զգացվում են նաև հեղինակի կողմից իրականացված՝ Ղարաբաղի և Զանգեզուրի գեղատեսիլ բնաշխարհի նկարագրություններից: Այդուհանդերձ, խմբի նպատակն առաջին հերթին սովից տուժածներին օգնելու միջոցներ փնտրելն ու տնտեսական պայմանների ուսումնասիրությունն էր: Առաքելության ընթացքում Զավարյանին հաջողվում է անմիջապես գյուղերից և պատկան մարմիններից ու պարբերական մամուլից հավաքել բավականին հարուստ տեղեկատվություն, որի գիտական դասակարգման և վերլուծության արդյունքում նա գրում և 1907 թ. Սանկտ Պետերբուրգում հրատարակում է «Ղարաբաղի տնտեսական պայմանները և 1906-1907 թթ. ՍՈՎԸ» աշխատությունը³⁹:

Զավարյանն իր աշխատության սկզբում նախ՝ ներկայացնում էր այն բնական պաշարները, որոնք առկա են Ղարաբաղի ընդերքում: Նրա կարծիքով՝ երկաթի, կապարի, արծաթի բազմաթիվ հանքավայրեր չեն շահագործվում, քանի որ պակաս են ոչ միայն քարածուխն ու կապիտալը,

38 С. Забарянь, Экономическія условия Карабага и ГОЛОДЪ 1906—1907г., Перевод съ армянскаго, С-Петербургъ, 1907. с.1.

39 Ի դեպ, աշխատանքը նախ՝ լույս է տեսել հայերեն, սակայն մեզ չհաջողվեց գտնել այդ հրատարակությունը, և օգտվել ենք վերը նշված ռուսերեն հրատարակությունից:

այլև ձեռնարկատիրական ոգին. «Ներկայումս հանքահումքային արդյունաբերությունը գլխավորապես զբաղված է պղնձի մշակությամբ, որը համեմատաբար քիչ քարածուխ է պահանջում և որի գինը տարեցտարի բարձրանում է: Բացի այդ, չպետք է մոռանալ, որ այստեղի հանքավայրերը դասվում են աշխարհի ամենահարուստ հանքավայրերի թվին»⁴⁰:

Այս աշխատության մեջ հետազոտող Ջավարյանին մի պահ փոխարինում էր հեղափոխական Ջավարյանը, ով լավատեսորեն կանխատեսում էր, որ քառասուն–հիսուն տարի հետո, երբ հանքաքարը ոչ թե ուղտերով, այլ երկաթուղով կտեղափոխվի, երբ ճնշող խավարի և վայրենի ավազակության փոխարեն մեր երկրում կտիրապետի լույսը, ազատությունը և խաղաղ աշխատանքը, ոչ ոք թող չզարմանա, որ գալիք սերնդի հարյուր հազարավոր մարդիկ հաց ու խաղաղ ստեղծագործ աշխատանք կգտնեն Կապանի և ամբողջ Փոքր Կովկասի հանքերում:

Որպես նման հեռանկարի երաշխիք՝ նա վկայակոչում էր հիդրոէներգետիկայի դեռևս չօգտագործվող ռեսուրսները, արագահոս ջրերն անվանելով «սպիտակ ածուխ»: «Այո, Ղարաբաղի հեռանկարը վեհ է ու պայծառ, իսկ ներկան... ավաղ, անլույս ու տխուր», – եզրակացնում էր Ս. Ջավարյանը (ընդգծումը մերն է– Ս. Ա.)⁴¹:

Այսպիսի եզրակացության համար նրան հիմք էր տալիս նաև կրթության անմխիթար վիճակը Ղարաբաղում և Ջանգեզուրում: Հեղինակի դիտարկումներով՝ բնակչության մոտ մեկ տասներորդ մասն է քիչ թե շատ գրագետ, կիրթ ու հարուստ: Ջավարյանը ցավով արձանագրում էր, որ Իսաչենի և Վարանդայի հարյուրավոր գյուղերից ընդամենը մեկ տասնյակն ունեն դպրոցներ: Ի դեպ, այդ դպրոցներն էլ բացվել էին ամենասաղքատ գյուղացիների և Բաքվի բանվորների ջանքերով: Իսկ հազարներ վատակող ինժեներները, որոնք հիմնականում ծագումով ղարաբաղցի ու զանգեզուրցի էին, գյուղական դպրոց բացելը կամ գյուղական կարիքներին աջակցելը մանր հարցեր էին համարում:

Անդրադառնալով երկրագործական պայմաններին՝ Ջավարյանը նշում էր, որ ինչպես Ղարաբաղում, այնպես էլ հայ-թաթարական խառը բնակչությունն ունեցող շրջաններում հողատիրության բնութագրիչ առանձնահատկությունը բազմաթիվ «բեկական» և «մեղիքական» գյուղերի գյուղացիների կիսաֆեոդալական կախվածության կարգավիճակն է: Վկայակոչելով «Кавк. Календарь»-ի 1907 թ. պաշտոնական տվյալները՝ հեղինակը գրում էր, որ Ղարաբաղում «Պետական հարկման ենթակա մոտ մեկ միլիոն դեպատինից (985000) մոտ մեկ երրորդը (336000 դես. = 34 %) պատկանում է գանձարանին, բայց մշակում են գյուղացիները, մյուս մասը՝ մեկ երրորդից քիչ պակասը (280000 դես.= 28%), պատկանում է բեկերին և դարձյալ մշակվում է գյուղացիների կողմից, վերջապես մնացած մասը՝ մեկ երրորդից մի քիչ ավելին (371000 դես. = 37.5%), հանդիսանալով բեկերի սեփականությունը, ամբողջապես գտնվում է նրանց տրամադրության տակ: Այս հողերը, մեծ մասամբ լինելով անտառներ և արոտավայրեր,

40 Նույն տեղում էջ 3:
41 Նույն տեղում, էջ 4:

թեն չունեն առաջին և երկրորդ կարգի հողերին հավասար տնտեսական նշանակություն, բայց պարզ պատկերացում են տալիս, թե ինչ ուժ ու կարևորություն ունեն կալվածատեր – բեկերը»⁴²:

Բեկական և խանական գյուղերում բնակվող գյուղացիները 1870 թ. օրենքով ձորտեր չէին, բայց համարվում էին մշտական բնակիչներ և պարտավոր էին բնեղեն ձևով վճարել մշակվող հողերի բերքի 1/10-ը և բացի դրանից յուրաքանչյուր դեսյատինի հաշվով՝ 30 կոպեկ⁴³: Ըստ Զավարյանի՝ թեն այս վերջին վճարը այդքան էլ ծանր հարկային բեռ չէր, բայց բարոյական առումով բացասական շատ կողմեր ուներ. «Հողագործ գյուղացին մշտապես զգում է, որ ինքը սեփական աշխատանքի տերը չի, նա գիտի, որ իր անձնական աշխատանքով ցանկացած բարելավում ծառայելու է հօգուտ բեկի, նա ոչ մի բոպե չի կարող մոռանալ, որ առանց պարոն կալվածատիրոջ համաձայնության ինքնուրույն չի կարող ծառ կտրել կամ անասունը արոտավայր հանել»⁴⁴: Ահա թե ինչու գյուղացին, ի դեմս կալվածատիրոջ, տեսնում էր իր թշնամուն, իրեն հարստահարողին, նսեմացնողին և անհաշտ էր նրա հետ: Ահա թե ինչու Ղարաբաղում հայ-թաթարական ընդհարումներն անխուսափելի էին ու տևական: Զավարյանը նշում էր, որ 1905 թ. հեղափոխական հուզումների արձագանքը Բաքվի միջոցով հասել է Ղարաբաղ: Քանի որ հայկական գյուղերի մեծ մասը ենթարկվում էր թաթար խաներին, ապա գյուղացիների պայքարը հարստահարիչների դեմ ի վերջո վերածվում էր հայ-թաթարական ընդհարումների. «... երկու տարի շարունակ դարավոր հարևանների արյունը հեղվեց... Կործանիչ պայքարի հետևանքները նկատելի են նաև հիմա, ամեն քայլափոխի»⁴⁵, – գրում է Ս. Զավարյանը:

Բացի բազմաթիվ մարդկային զոհերից՝ այդ ազգամիջյան բախումները հանգեցրին տնտեսական կյանքի կազմալուծմանը, որը համատարած սովի ու չքավորության պատճառ դարձավ: Հանձնախումբն իր այցելության ընթացքում անընդհատ հանդիպում էր դժբախտ մարդկանց խմբերի, որոնք փախչում էին ամայացած ու սովի մատնված շրջաններից. «Ծեր ու մանուկ, կին ու տղամարդ, որոշ մասը ձիավոր, որոշը սայլերով, իսկ մեծ մասը պարզապես ոտքով՝ բոլորը ուղևորվում են քաղաք... աշխատանքի ու մի կտոր հացի համար»⁴⁶: Այս տխուր պատկերներին ակնաստես Զավարյանը փորձում էր իրատեսորեն գնահատել գյուղացիների սովի ու չքավորության հիմնական պատճառները. «Ոչ ընդհանուր աշխարհագրական պայմանները, ոչ բնակչության կենցաղը, ոչ մշակութային զարգացման այս կամ այն մակարդակը, ոչ գյուղացիների ու հողատերերի փոխհարաբերությունները չեն կարող համարվել սովի պատճառներ: Այդ բոլոր պայմանները առկա էին և հինգ, և տաս տարի առաջ, բայց սով չկար: Ընդհանուր առմամբ, սովը դա անբերրիության և բնակչության

42 Նույն տեղում, էջ 8:

43 Ծանոթ. Ռուսաստանում ձորտատիրության իրավունքը վերացվեց 1861 թ. օրենքով, իսկ Կովկասում՝ 1870 թ. օրենքով:

44 Նույն տեղում, էջ 10:

45 Նույն տեղում, էջ 10:

46 Նույն տեղում, էջ 11:

ծայրահեղ չքավորության համատեղ դրսևորման արդյունք է»⁴⁷:

Այնուհետև, որպես այս եզրահանգման հիմնավորում՝ Զավարյանը նշում է, որ ներկա տնտեսական պայմաններում, երբ բնակչության 9/10-ը զբաղվում է բացառապես երկրագործությամբ, երբ շնորհիվ երկայտուղու կարելի է դրսից ստանալ ցանկացած քանակության ցորեն, առանձին վերցված ոչ վատ բերքը, ոչ դրամի տղությունը չեն կարող վտանգ ներկայացնել. «Լավ բերքի դեպքում փողի անբավարարությունը այնքան էլ զգալի չէ, իսկ անբավարար բերքի և նյութապես ապահովվածության դեպքում գյուղացին կարող է օգտվել ներկրված հացից: Վիճակը լրջանում է միայն այն ժամանակ, երբ առկա են վերոհիշյալ երկու պայմանները՝ անբերրիությունը ու չքավորությունը»⁴⁸: Դրանից հետո հեղինակն արձանագրում է, որ այդպիսի տխուր տնտեսական վիճակ է ստեղծվել Ելիզավետպոլի գավառի բոլոր այն վայրերում, որտեղ տեղի են ունեցել հայթաթարական բախումներ:

Իհարկե, Զավարյանի եզրահանգումներն ընդունելի են, սակայն պետք է նկատի ունենալ նաև, որ նշված երկու գործոնները՝ անբերրիությունը և գյուղացու անվճարունակությունը, այնուամենայնիվ, փոխկապակցված էին: Տրամաբանական է, որ 90%-ով երկրագործությամբ զբաղված գյուղացու վիճակը ուղղակիորեն կախված էր գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունից և միավոր հողատարածությունից ստացված եկամտի չափից: Թերևս այս նկատառումներով՝ քննարկվող աշխատության մեջ հեղինակը ծանրակշիռ տեղ էր տալիս այնպիսի տնտեսական ցուցանիշների վերլուծությանը, ինչպիսիք են՝ բնակչության մեկ շնչին ընկնող հողատարածության չափը, հողի մշակության ծախսերը, գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի գինը և եկամուտը: Ավելին, կատարում էր ցանքատարածության չափի և բերքատվության կապի ուսումնասիրություն: Նման կապի կազմակերպատեխնոլոգիական հարցերից զատ, Զավարյանը կարևորում էր գյուղացու ընտանիքի պարենային ինքնաբավության առումով ցանքատարածությունների նվազագույն չափի և ընդունելի բերքատվության սահմանման հարցը: Նա գտնում էր, որ մեկ շնչի հաշվով ցորենի տարեկան պահանջը կարելի է ընդունել 18 փութ (294.8 կգ) կամ ամսական 1.5 փութ (24.6 կգ) (1 փութը = 16.380 կգ): Հեղինակի հաշվարկներով՝ ստեղծված իրավիճակում Ղարաբաղի շուրջ 200000-ի հասնող հայ բնակչությունը* սովից խուսափելու համար հարկադրված է տարեկան դրսից գնել 1200000 փութ ցորեն⁴⁹: Պատճառները բազմաթիվ էին. կրճատվել էին ցանքատարածությունները, կարկտահարության պատճառով ցածր էր բերքատվությունը, ցածր էր հողագործության մշակույթը և այլն: Անբերրիության պատճառով, օրինակ, Կապանի և Բարգուշատի շրջաններում 1906-ին 1905-ի համեմատությամբ ցորենի գինը բարձրացել էր 80, գարու գինը՝ 100, տարեկանինը՝ 70, կարտոֆիլինը՝ 71, և ցորենի այլուրինը՝ 70%-ով: Գյուղացիները, հայտնվելով սովի ճիրան-

47 Նույն տեղում, էջ 12:

48 Նույն տեղում, էջ 12:

* Այդ ժամանակ «Ղարաբաղ» հասկացության մեջ ներառվում էին նաև Զանգեզուրի շրջանները և երկուսն էլ մտնում էին Ելիզավետպոլի նահանգի մեջ:

49 Նույն տեղում, էջ 19:

67
9-27
ՀԻՍ. ԲԱՐՈՒՅ ՅԱՅ ՎՈՒՆՆ. ՍՈՒՌՔԱՆ.

1689

1689

Ս. ՋԱՎԱՐՅԱՆ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԱՄ ԸՆԿԵՐԱԿԱՆ

ՅՅԵՄԱՐԱՆ — ԳԱՆՉԱՐԱՆԻ



Ս. ՋԱՎԱՐՅԱՆ 1907 2 489.

Ս. Ջավարյանի «Կանոնագիր գիղղական կամ ընկերական շտեմարան-գանձարանի» գրքի տիտղոսաթերթը

կողմերը զենքի վրա ծախսել են շուրջ 3-3.5 մլն ռուբլի, որը հավասար էր նրանց շարժական գույքի 1/6 մասին:

Ելիզավետպոլի նահանգում ստեղծված ծանր կացությունը գյուղական բնակչության արտահոսքի ակտիվացման պատճառն էր: Պանդխտությունը դարձել էր հայ բնակչության մշտական ուղեկիցը. «Եթե ընդհանրացնենք, կարելի է եզրակացնել, որ Ղարաբաղի չորս գավառներից մոտ 16.5 հազ հոգի կամ չափահաս բնակչության 1/6-ը, կամ տղամարդկանց 1/3-ը սովորաբար վաստակ են փնտրում դրսում: Այդ նույն թվական տվյալներից պարզ երևում է, որ այս տարի սովի հետևանքով վաստակի մեկնաձևների թիվը 1380-ից հասել է 1917-ի, այսինքն՝ ավելացել է ավելի քան 1.5 անգամ»⁵⁰, - նշում էր Ջավարյանը : Մակայն նա գտնում էր, որ դրսում աշխատանք փնտրողների թվի ավելացումը դեռևս չի նշանակում, որ ավելացել է գյուղում մնացած ընտանիքներին ուղարկվող օգնության չափը: Վերլուծելով վիճակագրական տվյալները՝ նա ցույց էր տալիս, որ 20-րդ դարասկզբին նկատվում էր հակառակ պատկերը. «Բաքվում ինչպես հայ, այնպես էլ թաթար աշխատողների թիվը վերջին տարիներին կտրուկ նվազել է»⁵¹: Դիցուք՝ եթե հայ աշխատողների տեսակարար կշիռը 1897 թ. կազմում էր 30%, ապա 1905 թ. իր թվաքանակով կազմել էր 16%, իսկ 1906 թ.՝ ընդամենը 9,8%⁵²: Ջավարյանը ցավով էր նկատում, որ «1897 թ. Բաքվում իրենց թվաքանակով առաջին տեղը զբաղեցնող հայ աշխատողները ներկայումս գրավում են 5-րդ տեղը, այդ առումով զիջելով ռուսներին, պարսիկներին, տեղացի թաթարներին և անգամ լեզգիներին: Այդ նույն քաղաքականությունը նկատելիորեն իրականացվում է Կովկասի այլ քաղաքներում և կենտրոններում՝ Թիֆլիսում, Բաթումում, հասկապես

50 Նույն տեղում, էջ 42:
51 Նույն տեղում, էջ 42:
52 Նույն տեղում, էջ 43:

այն ձեռնարկություններում, ինչպիսին են երկաթուղին, տրամվայը, որոնք գտնվում են կառավարության ենթակայության տակ: Այլ կերպ դժվար է բացատրել այն տխուր երևույթը, որ Վարանդից, Խաչենից, Միսիանից և Զանգեզուրից դեպի Բաքու եկողների մեծ մասը մնում են առանց որևէ աշխատանքի»⁵³:

Անգործ թափառող պանդուխտների մի մասը հրապուրվում էր կապածելի խմբերի կողմից ապրուստի թելթև միջոց գտնելու խոստումներով, իսկ հանցագործ զբաղմունք ընտրած մի մասն էլ ամիսներով անգործ ու սոված թափառելուց հետո ծախսելով տնից բերած վերջին կոպեկները՝ վերջնականապես դատարկ ձեռքով տուն էր դառնում: «Բնական է, որ այդ թշվառները միշտ պատրաստ են գյուղում աշխատել ցանկացած վճարով, - նշում էր Զավարյանը: - Մենք հաճախ էինք տեսնում, որ նախկինում 1 ռուբլի 20 կոպեկ ստացող պատշարը աշխատում է 30-40 կոպեկ, սովորաբար 10 -7 ռուբլի ամսավարձով բանվորը աշխատում է 3-2 ռուբլով, անգամ ձրի, միայն թե քաղցած չմնա... »⁵⁴:

Ս. Զավարյանը Զանգեզուրի մի քանի գյուղերի օրինակով ցույց է տալիս նաև, թե ինչպես է ավելացել արտագնա աշխատանքի մեկնող գյուղացիների թիվը: Դրա հետ մեկտեղ նրանց վճարում էին այնքան չնչին աշխատավարձ, որ այն չէր բավարարում ընտանիքի գոյությունը պահպանելու համար: Վերլուծելով Կապանի պղնձի գործարանի աշխատողների տնտեսական վիճակը՝ Ս.Զավարյանը գրում է. «1906 թ. դեկտեմբերին գործարանային շուկայում մեկ ֆունտ 3-րդ տրոտի հացը վաճառվում էր 6 կոպեկ: Եթե նկատի ունենանք մեկ աշխատողին սնվելու համար օրական երեք ֆունտ հաց է պետք և 10- 12 կոպեկի այլ մանր ծախսեր (սոխ, միս, թեյ, շաքար, հագուստի նորոգում), մենք կհամոզվենք, որ սևագործ բանվորը մեծ դժվարությամբ կարող է օրական հետ զցել 10-12 կոպեկ գումար, որը հազիվ բավարարի մի մանկան պահանջ-մունքները»⁵⁵:

Հեղինակը գործատուներից մեկի տվյալներով հաշվարկում էր, որ 1 փութ հանքաքարից ստացվում է 1ռ. 52 կոպեկ զուտ եկամուտ: Երեք հիմնական գործարաններում տարեկան միջին հաշվով ձուլվել է 1500 փութ հանքաքար: Նրա հաշվարկներով՝ Կապանի երեք խոշոր գործարանները (Ա.Մելիք-Ազարյանցի, Կունդուրովի, Խ. Նազարբեկովի) օրական արտադրվող 4560 ռուբլի պղնձի արժեքից ամեն օր ստանում են 2250 ռուբլի, 225-ը գնում է որոշ հողատերերի և միջնորդների գրպանը և մնացած 2000 ռուբլին բաշխվում է 4000 աշխատողների միջև⁵⁶: Վիճակը բարվոք չէր նաև մետաքսամանվածքային գործարաններում: Դրանք հիմնականում տեղաբաշխված էին Խաչենում և Վարանդայում: Այստեղ աշխատողների վարձատրությունը, տարիքից կախված, խիստ տատանվում էր: Հեղինակի տվյալներով՝ 8-12 տարեկան երեխաներին օրական վճարում էին 7-8 կոպեկ, 17-20 տարեկան աղջիկներին՝ 15-18 կոպեկ և 30-35 տարեկան

53 Նույն տեղում, էջ 45:

54 Նույն տեղում, էջ 45:

55 Նույն տեղում, էջ 46:

56 Նույն տեղում, էջ 48:

մեծահասակներին՝ 20-40 կոպեկ: 40 կոպեկը վարձատրության ամենաբարձր չափն է, որը տրվում է որակյալ վարպետներին⁵⁷: Ստեղծված իրավիճակում բնակչության մեծամասնությունը իր գոյությունը պահպանելու համար ստիպված էր բախել վաշխառուների դուռը:

Ս.Ջավարյանի կողմից մանրամասն հետազոտվել է գյուղացու ընտանեկան բյուջեն: Ակնհայտ էր, որ հատկապես գյուղատնտեսության համար անբարենպաստ տարիներին գյուղացիների գերակշիռ մասն ի վիճակի չէ սեփական եկամուտների հաշվին ծածկելու ընտանիքի ամենանվազագույն ծախսերը: Ուստի Ջավարյանի կողմից նշված մի քանի գյուղերի տվյալները բավական են պատկերացում կազմելու, թե տարեցտարի ինչպես էր ավելանում պարտքի տակ կքած գյուղացիների թիվը և պարտքի գումարների չափը (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Մի քանի գյուղերի պարտքերը 1907 թ.⁵⁸

| Գյուղերը | Ծխերի թիվը | Պարտքատերերի թիվը | | Պարտքի ընդհանուր գումարը | | Վերջին 3 տարիներին ավելացել(+) պակասել (-) է | |
|-------------|------------|-------------------|-----------------|--------------------------|-----------------|--|----------------|
| | | 3 տարի առաջ | ներկայումս | 3 տարի առաջ | ներկայումս | պարտքատերերի թիվը | պարտքի գումարը |
| Քարահունջ | 192 | 120 | 170 | 15000 | 25000 | 50 | 10000 |
| Տեղ | 700 | 400 | 650 | 25000 | 45000 | 225 | 20000 |
| Բոնկոթ | 410 | 350 | 350 | 20000 | 25000 | - | 5000 |
| Թազագյուղ | 102 | 50 | 60 | 3000 | 5000 | 10 | 2000 |
| Ղարիլի Հայկ | 120 | 45 | 60 | 4000 | 6000 | 15 | 2000 |
| Ղարքիլ թաթ | 80 | 20 | 30 | 3000 | 4000 | 10 | 1000 |
| Ընդամենը | 1604 | 985 (61,5%) | 1320 (82,5%) | 70000 (71%) | 110000 (83%) | 335 (34%) | 40000 (57%) |

Ազգամիջյան բախումների և անբերրիության հետևանքով Ղարաբաղի կրած վնասը հաշվարկվել էր շրջանային հանձնաժողովների կողմից և ներկայացվել իշխանություններին՝ նպաստ տրամադրելու համար: Ս. Ջավարյանի տվյալներով՝ նպաստի պահանջվող գումարը այդ հանձնաժողովների կողմից հաշվարկվել էր մոտ 350 հազար ռուբլի՝ Ջանգեզուրի համար և 550 հազար ռուբլի՝ ամբողջ Ղարաբաղի համար: Նկատի ունենալով, որ մեկ ծխի հաշվով նպաստի չափը կազմում էր 60-150 ռուբլի, իսկ միջինը՝ 90 ռուբլի, «կարելի է ընդունել, որ սնանկացած ընտանիքների թիվը Ջանգեզուրի շրջանում հավասար է 4000-ի, իսկ ամբողջ Ղարաբաղում՝ ավելի քան 6000-ի»⁵⁹:

Ջավարյանը, վկայակոչելով մեկ այլ հետազոտողի (Ա-Ռո), ով հատուկ ուսումնասիրել էր վնասները, սնանկացած և խիստ տուժած գյուղերի ու

57 Նույն տեղում, էջ 49-50:

58 Նույն տեղում, էջ 55:

59 Նույն տեղում, էջ 61:

ընտանիքների մասին բերում է հետևյալ տվյալները (Աղյուսակ 3)⁶⁰.

Աղյուսակ 3.

Մասնկացած գյուղերի և ընտանիքների թիվը
ըստ Ղարաբաղի գավառների

| Գավառները | Հայկական | | Թաթարական | | Ընդամենը | |
|------------|----------|---------|-----------|---------|----------|---------|
| | գյուղ | ընտանիք | գյուղ | ընտանիք | գյուղ | ընտանիք |
| Շուշիի | 8 | 334 | 12 | 1083 | 20 | 1417 |
| Ջիվանշիրի | 9 | 655 | 15 | 840 | 24 | 1495 |
| Ջաբրայիլի | 14 | 434 | 5 | 43 | 19 | 477 |
| Ջանգեզուրի | 14 | 817 | 43 | 1465 | 57 | 2282 |
| Ընդամենը | 45 | 2340 | 75 | 3431 | 120 | 5771 |

ԳԻՏՆԱԿԱՆ

Ե (ՃԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

«Հաշվի առնելով, որ հայկական ընտանիքին միջին հաշվով բաժին է ընկնում 7,5 շունչ, իսկ թաթարականին՝ 6, հարստահարված գյուղերի հայերի թիվը կկազմի 17550, իսկ թաթարներինը՝ 20586 մարդ: Բացի այդ, Շուշի քաղաքում վառվել է 370 հայկական և մինչև 100 թաթարական տներ: Մեկ վառված տանը ընդունելով 10 շունչ, ստանում ենք հարստահարված 3700 հայ և 1000 թաթար քաղաքացիներ», - եզրակացնում էր Ջավարյանը⁶¹:

Ամփոփելով վնասների չափը՝ հեղինակը գյուղական բնակչության մեկ շնչի կորուստը գնահատում էր 30-40 ռուբլի, ընդհանուր տուժածների թիվը՝ 38 հազար մարդ, իսկ ընդհանուր վնասը՝ 1141-1524 հազար ռուբլի⁶²:

Հետազոտության եզրափակիչ մասում կատարվում էին մանրամասն հաշվարկներ՝ սովի հետևանքները հաղթահարելու և ձգնաժամից դուրս գալու համար անհրաժեշտ սննդամթերքի, նյութական և դրամական միջոցների պահանջը որոշելու նպատակով:

Համեմատության մեջ դնելով ոչ վաղ անցյալի (1988-1994 թթ.) հայադրբեջանական դիմակայության և պատերազմի արդյունքները, կարելի է եզրակացնել, որ երկրամասի պատմությունը կրկնվել է: Այդ համատեքստում էլ ավելի է արժևորվում Արցախյան գոյամարտում հայ զենքի ու ոգու հաղթանակը, որով շրջվել է պարբերաբար մեր ունեցած մեծաթիվ զոհերի և նյութական ու տարածքային կորուստների տրամաբանությունը:

Եզրակացություններ

Մեկ ուսումնասիրության շրջանակներում դժվար է հանգամանորեն անդրադառնալ Ս. Ջավարյանի բոլոր գիտական աշխատություններին, սակայն ժամանակի հեռավորությունից նրա գիտական և հրապարակախոսական ժառանգության ուսումնասիրությունը հանգեցնում է մի աներկբայելի եզրակացության. **Ջավարյանը հեղափոխական էր նաև ազդարար** -

60 Նույն տեղում, էջ 61:

61 Նույն տեղում, էջ 61:

62 Նույն տեղում, էջ 62:

յին տնտեսագիտության ոլորտում: Դրա ամենավառ ապացույցն այն հիմնախնդիրներն են, որոնք նա վեր է հանել դեռևս 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին և փորձել է ցույց տալ լուծման ուղիներն ու հնարավորությունները:

Հայտնի է, որ օբյեկտիվ պատճառներով տնտեսության ամենապահպանողական ոլորտը գյուղատնտեսությունն է, սակայն այն հանգամանքը, որ Ս. Զավարյանի կողմից բարձրացված որոշակի հիմնախնդիրներ այսօր էլ հրատապ են, պայմանավորված է ոչ միայն ոլորտի պահպանողականությամբ, այլև հեղինակի հեռատեսությամբ ու խորաթափանցությամբ: Դրանում համոզվելու համար պարզապես մատնանշենք Զավարյանի կողմից առաջադրված մի քանի հիմնադրույթներ, որոնք այսօր էլ հրատապ են ու արդիական.

- տարերային աղետներին և ձգնաժամերին դիմակայելու համար գյուղատնտեսության ոլորտում պետք է ունենալ առաջադիմական տեխնոլոգիաներ կիրառող, տեխնիկապես հագեցված և դիվերսիֆիկացված (բազմազանեցված) տնտեսություն,

- Կովկասի բնատնտեսական պայմաններին մոտ գտնվող բազմաթիվ երկրներ հասել են գյուղատնտեսության զարգացման բարձր մակարդակի, քանի որ այդ ոլորտում ունեն գիտության, կրթության և աշխատանքի կազմակերպման նորությունների ներդրման բարձր մշակույթ,

- հայ գյուղացին աղքատ է ոչ միայն այն պատճառով, որ ապահովագրված չէ անբարենպաստ տարիներին կրած վնասներից, այլ որովհետև տարածաշրջանում առկա են ազգամիջյան հակամարտություններ, որոնք սահմանափակում են արտադրական հնարավորությունները և ավելացնում ծախսերը,

- թույլ են զարգացած գյուղատնտեսական հումք վերամշակող, գյուղատնտեսությանը արտադրության միջոցներ և սպասարկումներ առաջարկող ենթակառուցվածքները,

- հայ աշխատավորը ստիպված է դրսում ապրուստի միջոց որոնել, քանի որ երկրի ներսում չի գտնում արժանավայել վարձատրվող աշխատանք, իր ձեռնարկատիրական ընդունակությունների լիարժեք դրսևորման հնարավորություն, արդարություն և երաշխավորված անվտանգություն,

- փոխատվական կապիտալի տոկոսը բարձր է գյուղատնտեսության ոլորտի շահութաբերության խելամիտ մակարդակից, իսկ բանկային համակարգը դեռևս չի հրաժարվել ասիական վաշխառուական գործելաճից և այլն:

Կարելի է շարունակել այս շարքը, սակայն որպես ընդհանրացում նշենք, որ Ս. Զավարյանի կողմից ժամանակին առաջադրված հիմնախնդիրները ներկա պայմաններում մեր ազգային անվտանգության այն ակնառու մարտահրավերներն են, որոնք ուղղակիորեն ամնչվում են բնակչության տնտեսական, մասնավորապես պարենային անվտանգությանը:

Միմոն Զավարյանը, ունենալով ազրոնոմիական և տնտեսագիտական հարուստ գիտելիքներ, բեղմնավոր գրիչ և առաջադիմական հայացքներ, շատ քիչ ժամանակ է ունեցել զբաղվելու զուտ գիտական հետազոտություններով: Նրա բազմազբաղ առօրյայի առյուծի բաժինը կլանել է հա-

սարակական և հեղափոխական գործունեությունը: Այդուհանդերձ, Զավարյանի ագրոտնտեսագիտական ժառանգությունն ունի տեսական և գործնական մեծ արժեք, որը հասկանալի պատճառներով խորհրդային տարիներին անտեսված է եղել, իսկ մեր օրերում դեռևս կարիք ունի լուրջ ուսումնասիրության և անկողմնակալ գնահատման:

Summary

SIMON ZAVARYAN AND THE ARMENIAN ARGAGIAN ECONOMIC THOUGHT

At the late 19th and early 20th centuries

Samvel S. Avetisyan

One of three founders of AR Federation – Simon Zavaryan was not only a social and political figure; he greatly contributed also to the development of the Armenian economic thought in the late 19th and early 20th century. He graduated from the one of the most eminent and democratic higher educational institutions – Petrovsky Agricultural Academy and engaged in affairs concerning agriculture in Caucasus, Zavaryan traveled all over Transcaucasia, especially in the provinces of Kutaisi, Yerevan and Yelizavetpol and in the region of Kars, he there examined the agriculture of the country and the life of the peasants, then he published series of valuable monographs and numerous scientific articles.

The following research is the first attempt to appreciate at its true value the scientific heritage of Simon Vratsyan, to explore the importance and currency of the ideas expressed in his works published in Russian and Armenian languages.

At present, even after one century, we can conclude due to the research/examination of his scientific and social-political heritage that Zavaryan was revolutionary also in the sphere of agricultural economics and his propositions concerning the development of agriculture are very urgent and relevant nowadays.

ԳԻՏՄԱԿԱՆԸ

ՎԷՄ համահայկական հանդես
Ե (ՃԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես